

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38րդ. ՏԱՐԻ ԹԻԻ11 (1861) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 24, 2018
VOLUME 38, NO. 11 (1861) SATURDAY, MARCH 24, 2018



Պաշտոնաթերթ
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Արտաքին Պարտքը Վտանգաւոր Սահմանի Վրայ

Հայաստանի կառավարութիւնը որոշած է ֆինանսներու նախարարութեան միջոցաւ 40 միլիոն եւրոյի նոր վարկ վերցնել, այդպիսով քայլ մը եւս մտնելով 7 միլիարդ տոլարի վտանգաւոր գիծին:

Տնտեսագետներու կարծիքով, ոչ շատ ուշ ապագային երկիրը պիտի գտնուի այդ պարտքերու տոկոսները վերադարձնելու դժուարութեան առջեւ: Ըստ տուեալներու, 10 տարի առաջ արտաքին պարտքը ներքին համախառն արտադրութեան համեմատ կը կազմէր 16 տոկոս, իսկ այժմ այդ ցուցանիշը մտնեցած է 60 տոկոսի սահմանները: Արտաքին պետական պարտքը պիտի շարունակէ աճիլ յաջորդ տարիներուն եւս, նկատի առնելով, որ պետութեան եկամուտները բաւարար չեն ապահովելու պիտուճեով նախատեսուած ծախսերը:

Այս կացութեան առաջըք առնելու համար կայ երկու միջոց. կամ պետք է պիտուճեով նախատեսուած ծախսերը կրճատել եւ կամ հարկային մուտքերը բարձրացնել: Սակայն, Հայաստանի իշխանութիւնները չեն յաջողիր ոչ մէկը ընել եւ ոչ ալ միւսը, նկատի առնելով որ օլիգարխիկ համակարգը չարտօներ բարեփոխումներ իրականացնել այս ուղղութեամբ:

Երկրի տնտեսութիւնը կը գտնուի նոյն փոքրաթիւ անհատներու ու անոնց ընտանիքներու ձեռքերուն մէջ, որոնք նոյն ատեն կը գրաւեն խորհրդարանի աթոռներու մեծ մասը ու անձեռմխելիութիւն ձեռք ձգելով կը յաջողին խուսափիլ հարկերու իրենց արդար բաժինը վճարելէ:

Միւս կողմէ յաճախ կը խօսուի ու կը գրուի այն մասին, որ պիտուճեով կը մսխուին մեծ գումարներ, որոնք ոչ թէ կ'օգտագործուին ժողովուրդի կենսամակարդակը բարելաւելու ուղղութեամբ՝ աշխատավարձերու եւ թոշակներու բարձրացումով, աշխուժացնելու տնտեսութիւնը կամ ստեղծելու աշխատատեղեր, ընդհակառակը գումարներ կը վատնուին հանդիսութիւններ, համերգներ եւ տոնակատարութիւններ կազմակերպելու, պետական պարգեւներ շնորհելու, բարձրաստիճան պաշտօնեաներու գրասենեակներու կահոյքները արդիականացնելու եւ անոնց համար նոր ինքնաշարժեր ապահովելու եւ այլն: Այս բոլորը յաւելելով ճոխութիւններ են Հայաստանի նման երկիր մը համար, որու բնակչութեան 30 տոկոսը, ըստ պաշտօնական տուեալներու, կը գտնուի աղքատութեան եզրին:

Յուսանք, որ նորընտիր նախագահն ու գալիք վարչապետը աւելի մեծ ուշադրութիւն կը դարձնեն երկրի համար այս խիստ կարեւոր հարցին: **«ՄԱՍԻՍ»**

Սերժ Սարգսեան Յայտարարեց Որ Պատրաստ է Ստանձնելու Վարչապետի Պաշտօնը

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը Tert.am լրատու կայքէջին հարցազրոյց տալով յայտարարեց, որ Ապրիլ 9-էն ետք, երբ կ'աւարտի իր պաշտօնավարման երկրորդ շրջանը, պատրաստ է ստանձնելու վարչապետի պաշտօնը:

Պատասխանելով այն հարցին թէ, ինք խոստացած էր այսուհետեւ պետական պաշտօն չստանձնել, Սարգսեան ըսած է. «Այո, ես այսօր էլ չեմ յաւակնում վարչապետի պաշտօնին: Բայց ես նախապաշարունակելով կամ քարացած մտածողութեամբ առաջնորդուող մարդ ինձ երբեք չեմ համարել: Ես չեմ կարող հաշուի չնստել իրականութեան հետ եւ համարել, որ չունեմ պատասխանատուութիւն ապագայի եւ ժամանակի մէջ մեր երկրի սահուն ընթացքի համար»:

Սարգսեան աւելցնելով ըսած է. «Չգիտեմ այս քննարկումները երբ կ'աւարտենք: Բայց եթէ ի վերջոյ որոշենք, որ առաջադրուելու է իմ թեկնածութիւնը, ապա դա կը լինի իմ կողմից մէկ յաւելումով՝ առ այն, որ սահմանադրական լիազօրութիւններու ամբողջական իրականացմանը զուգահեռ աւելի



ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան

շատ ժամանակ եմ յատկացնելու երիտասարդ քաղաքական լիտերներին մեր երկրի անցած տարիների երեւացող ու չերեւացող ողջ փորձը փոխանցելու գործին»:

Մեկնաբանելով 2014 թուականին կատարած իր խոստումը, Սարգսեան յայտարարած է. «Երբ գործիչն ուզում է քաղաքական յայտարարութիւն անել այն մասին, որ չի լինելու ինչ-որ տեղում,

Շար.ը էջ 5

ՀԱՄ Զօրակցութիւն Կը Յայտնէ Լուզ Ռիվասին



ՀԱՄ-ի ներկայացուցիչներ՝ Վազգէն Խաչատուրեան Լուզ Ռիվասի հետ

Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱՄ) իր գորակցութիւնը յայտնեց Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի թեկնածու Լուզ Ռիվասին: Ան կը ձգտի ներկայացնելու 39-րդ ընտրաշրջանը, ուր վերջին տարիներուն հաստատուած են մեծ թիւով հայեր: Ընտրաշրջանը կ'ընդգրկէ Սան Ֆերնանտո հովիտի որոշ թաղամասերը՝ Arleta, Lake View Terrace, Mission Hills, North Hollywood, Pacoima, Sun Valley, Sunland-Tujunga, Sylmar եւ San Fernando:

Լուզ Ռիվասը շրջանաւարտ է Հարվարտի համալսարանին: Ան հիմնադիրն է բարեխրական «DIY (Do-It-Yourself) Girls» շահույթ չհետապնդող կազմակերպութեան,

որու գլխաւոր նպատակն է քաջալերել աղջիկները մուտք գործելու գիտութեան եւ թեքնոլոգիաներու ոլորտներէն ներս:

Լուզ Ռիվասը ծառայած է նաեւ որպէս Լոս Անճելըս քաղաքի Հանրային աշխատանքներու յանձնակատար:

Հայ Ամերիկեան Խորհուրդը կը հաւատայ, որ Լուզ Ռիվասի կրթական պատրաստութիւնը, հանրային եւ մասնաւոր հատուածներէն ներս ունեցած փորձը, ինչպէս նաեւ ոչ շահութաբեր հատուածէն ներս գործունէութիւնը, գինք կը դարձնեն լաւագոյն թեկնածուն՝ ներկայացնելու 39-րդ ընտրաշրջանը Քալիֆորնիոյ Խորհրդարանէն ներս:

Շար.ը էջ 5

Հայաստանէն Տարեկան միջին Հաշուով 44 Հագար Մարդ Հեռացած Է

Տարբեր գնահատականներով՝ վերջին 15 տարիներուն արտերկրի մէջ հայ աշխատանքային գաղթականներու թիւը կազմած է մօտ 200-300 հազար: Լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտնած է ժողովրդագիր Ռուբէն Եգանեանը, ներկայացնելով Հայաստանի արտաքին գաղթի իրավիճակի եռամեայ հետազոտութեան զեկոյցը:

Ան ըսած է, որ տակաւին յստակ չէ աշխատանքի համար մեկնողներու վերադարձը, ոչ ալ արտերկրի մէջ մնալը: Այս հարցը տակաւին կը մնայ անորոշութեան մէջ եւ անոնց հետագայ վարքագիծով պայմանաւորուած է Հայաստանէն գաղթի հետագայ գործընթացներու ձեւաւորումը:

2017-ի հետազոտութեան տուեալներով՝ 2014, 2015, 2016 թուականներուն տարեկան միջին հաշուով՝ մեկնած ու չեն վերադարձած 44 հազար մարդ:

Եգանեան աւելցուցած է, որ գաղթի թէ՛ մշտական, թէ՛ ժամանակաւոր հոսքերու մէջ անհամեմատ բարձր թիւ կը կազմեն տղամարդիկ եւ վերաբարտադրողական ու աշխույժ աշխատանքային տարիքի մեծամասնութիւնը:

Գաղթի հիմնական պատճառներու մէջ, ըստ բանախօսի, յստա-

Շար.ը էջ 5

Թուրք Դասախօսը Կը Մեղադրուի Հայկական Թեմայով Գիտաժողով Կազմակերպելու Մէջ

Թուրքիոյ «Էրճիլէս»-ի համալսարանի նախկին դասախօս պրոֆեսոր Շաքիր Պաթմազ մեղադրուած է «Ֆեթուլլահական ահաբեկչական կազմակերպութեան» (FET) անդամակցելու եւ պատասխանատու դերակատարի մէջ ըլլալու համար:

«Էրմենիհայեր»-ը կը գրէ, որ Պաթմազի դէմ ներկայացուած մեղադրականի մէջ կարեւոր տեղ յատկացուած է հայերու հետ յարաբերութիւններուն եւ Կիւլլենական համայնքի դեկավար, իսլամի յայտնի քարոզիչ, ամերիկաբնակ թուրք միլիտանտի ֆեթուլլահ Կիւլլենի հայկական ծագման վերաբերեալ անոր կարծիքին:

Կիւլլենը թուրքական իշխանութիւններու կողմէն կը համարուի FET-ի հիմնադիր-ղեկավար եւ կը մեղադրուի 2016թ. 15 Յուլիսի ռազմական յեղաշրջման փորձը կազմակերպելու մէջ:

Պաթմազի մեղադրականի մէջ

Շար.ը էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Ամերիկա-Ռուսական Կոնսենսուս. Բակո Սահակեանի Պատասխանը Պաքուին

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԼԵԱՆ

Արցախի նախագահ Բակո Սահակեանը շնորհալուր էլ ՌԴ նախագահ Փոլտինին, Մարտի 18-ի նախագահի ընտրութեանը չարթեղու առիթով: Բակո Սահակեանը Փոլտինին փաստացի շնորհալուր է Միացեալ Նահանգներին: Նա այցելել է այդ երկրի մայրաքաղաք, հանդիպումներ ունեցել ԱՄՆ Կոնգրեսում, նաեւ փորձագիտական շրջանակներում: Բակո Սահակեանի այդ այցը արժանացել էր Պաքուի դժգոհութեանը, որ բողոքի տեսքով ներկայացուել էր Ատրպէյճանում ԱՄՆ դեսպանին:

Միեւնոյն ժամանակ, նկատելի է, որ Պաքուն Բակո Սահակեանի արցախեան այցի համատեքստում որոշակի ջանք է գործադրել այցը «հակառուսականութեան» փաթեթով ներկայացնելու համար, այդպիսով Մոսկուայի հակադրեցութիւնն առաջացնելու համար, նկատի ունենալով այն, թէ որքան զգայուն կարող է լինել Մոսկուայի հակառուսական կողմում Արեւմուտքի ուղղութեամբ ակտիւութեան հանդէպ:

ՌԴ նախագահի ընտրութեան առիթն օգտագործելով, Բակո Սահակեանն ըստ երեւոյթի փորձել է հակադարձել ատպէյճանական ջանքին եւ Մոսկուայի համար բալանսաւորել իրավիճակը, ցոյց

տալով, որ ամերիկեան այցը Արցախի արտաքին քաղաքականութեան մէջ ուսուսական ուղղութիւնը ոչ թէ բացառելու կամ փոխարինելու, այլ լրացնելու համար է:

Ընդ որում՝ լրացում, որի անհրաժեշտութիւնն ունեն ոչ միայն հայկական երկու պետականութիւնները՝ հաշուի առնելով ԱՄՆ անուշի դերը միջազգային եւ ռեգիոնալ անվտանգութեան համատեքստում, այլ ունի նաեւ Ռուսաստանն ինքը, քանի որ առանց ԱՄՆ դերակատարութեան Մոսկուայի համար ներկայումս չափազանց բարդ կը լինի Կովկասի ռեգիոնալ անվտանգութեան համատեքստում դիմադրաուել թուրքատրպէյճանական ճնշումը:

Աւելին, գործնականում ԱՄՆ-ն է այդ հարցում Ռուսաստանի համար առաւելագոյն, իսկ գուցէ միակ նախընտրելի գործընկերը, քանի որ ռեգիոնում ազդեցութեան եւ շահերի համար մրցակցութիւնում Նահանգները խոշոր հաշուով Ռուսաստանի համար ոչ թէ անմիջական մրցակից կամ առաւել եւս հակառակորդ է, այլ ըստ էութեան նրանց միջեւ մրցակցութիւնն այսպէս ասած էքզիստենցիալ է, թէկուզ դիմակալութեան, բայց նաեւ փոխզիջումային ահռելի պաշարով, քանի որ Նահանգների գլոբալ դերակատարումը ենթադրում է նաեւ ռեգիո-

նալ անվտանգութեան համակարգի կառավարման համատեքստում պայմանաւորութիւնների աւելի լայն միջավայր:

Մի բան, որ Մոսկուայի համար հնարաւոր է ռեգիոնալ խաղացողների, թուրքիայի եւ անգամ իրանի հետ, հաշուի առնելով այն, որ այստեղ արդէն մրցակցութիւնը խիստ անմիջական է եւ «առօրեական», չնայած յարաբերութեան առաւել բարենպաստ ընթացիկ ռեժիմին:

Այդ իմաստով, յատկապէս ապրիլեան քառօրեայի ձախողումից յետոյ, որը նաեւ ուսուսական գլոբալ պատասխանատուութեան ձախողումն էր, հայկական քաղաքականութեան մէջ ամերիկեան ուղղութիւնը ցանկալի լրացում է նաեւ Մոսկուայի համար:

Բակո Սահակեանի շնորհալուրական ուղերձը Փոլտինին անշուշտ այդ կարգից է, թէեւ այստեղ պէտք է նկատել նաեւ, որ ՌԴ նախագահի ընտրութիւնից յետոյ առկայ է ամենեւին ոչ փրիլիսոփայական, այլ պրակտիկ քաղաքական հարց՝ ով կամ ի՞նչ է Փոլտին-2018-ը: Այն ուսուսական «ցար»-անձ է, թէ՞ «ցար»-նախագիծ: Ինչպէ՞ս է ստացուել նրա մօտ 80 տոկոս քուէն: Դա Փոլտինի անվերապահ հեղինակութիւնն է «սառը պատերազմեան» ֆոնին, երբ ուսուսական հանրութեան մօտ սրուել է

մեծապետականութեան պետականաստեղծ զգացումը՝ ի դէմս Փոլտինի, թէ՞ այդուհանդերձ Փոլտինին իր 80 տոկոսի համար աւելի պարտական է լինելու իշխանութեան տարբեր շրջանակների, աւելի շատ ինքը դառնալով նրանց ենթակայ, քան հակառակը:

Միեւնոյն ժամանակ, այդ համատեքստում արժէ ուշադրութիւն դարձնել ՌԴ նախագահի ընտրութիւնից առաջ բաւական ուշագրաւ ամերիկա-ռուսական խաղի: Մասնաւորապէս, Ուաշինգթոնը հրապարակեց Փոլտինի կամ Կրեմլի ցուցակը, որտեղ նրա մօտ ու հետո ամբողջ իշխանատնտեսական շրջապատն էր:

Այդ ցուցակը ստիպեց այդ շրջապատին աւելի ամուր գրկել Փոլտինին, քանի որ գործնականում իրատեսական է էր պատկերացնել, որ մօտ 200 միլիարդատէր եւ առանցքային պաշտօնեայ կարող էին գործնական պայմանաւորութեան գալ Փոլտինին յանձնելու շուրջ:

Այդպիսով, նախագահի ընտրութեան գործընթացից առաջ ԱՄՆ կամայ թէ ակամայ օգնեց Փոլտինին ձգել իր շրջապատը, այն առանցքային խմբերին, որոնք պէտք է դեր ունենային նախագահի ընտրութեանը:

Կրեմլի ցուցակի հրապարակումից մի քանի օր առաջ յաջորդաբար Ուաշինգտոն էին մեկնել ՌԴ երեք յատուկ ծառայութիւնների ղեկավարները, հանդիպումներ ունենալով ԱՄՆ յատուկ ծառայութիւնների ղեկավարների հետ: Ի դէպ, նախագահ Թրամփը օրերս նրանցից մէկին՝ Կէլ պետ Մայք Պոմպեոյին նշանակեց արտաքին գործերի նախարար:

«ԼՐԱԳԻՐ»

Սերժ Սարգսեանը Կ'ընտրի Ժառանգորդին

ԱՆԻ ՍԱՅԱԿԵԱՆ

Եւ այսպէս, Tert.am-ին տուած հարցազրոյցում Սերժ Սարգսեանը խօսել է իր վարչապետ դառնալու եւ նախկինում արած յայտարարութեան մասին՝ ըստ էութեան խմբագրելով 2014-ին իր այն յայտարարութիւնը, թէ այլեւս երբեք չի առաջադրուելու պետութեան ղեկավարի պաշտօնում: Հարցազրոյցից կասկած չի մնում, որ հենց Սերժ Սարգսեանն է լինելու խորհրդարանական Հայաստանի առաջին վարչապետը, որը փաստացի երկրի ղեկավար պաշտօնն է, չնայած ի սկզբանէ յայտնի էր, որ սահմանադրական բարեփոխումների գործընթացը նա նախաձեռնել էր իր իշխանութիւնը չաւերածացնելու համար, իսկ դրանից յետոյ էլ, մասնաւորապէս՝ վերջին ամիսներին, տեսանելի էր, որ ստեղծուում է «սուպեր» վարչապետական մոդել, ինչը նոյնպէս վկայում էր, որ Սերժ Սարգսեանը չի պատրաստում իշխանութիւնը յանձնել որեւէ մէկին: Բնականաբար նա այժմ փորձում է բառախաղի միջոցով իր ընդդիմախօսներին մեղադրել թիւրքամբռնումների մէջ՝ ասելով, որ ինքը ոչ թէ խոստացել է չաւերաւորուել, այլ ասել, որ չի հաւակնում, սակայն դրանից ամենեւին էլ չի փոխուում ինդրի էութիւնը: Աւելին, այս արդարացումներից տպաւորութիւն է ձեւաւորում, որ հիմնաւորման հեղինակային իրաւունքները ոչ այնքան շախմատային բարդ կոնֆլիկտաբանների սիրահար Սերժ Ազատիչինն են, որքան նորընտրված քաղաքական որեւէ գործչինը, որի համար քաղաքական գործունեութեան ամենախոշոր ձեռքբերումը բառախաղային յաջողակ պարտիան է:

«Երբ գործիչն ուզում է քաղաքական յայտարարութիւն անել

այն մասին, որ չի լինելու ինչ-որ տեղում, նա ասում է՝ ես չեմ լինելու այսինչ տեղում, ինչպէս ես յատակ յայտարարել եմ, որ չեմ լինի Հայաստանի Հանրապետութեան նախագահ: Բայց երբ պնդումը քաղաքական համատեքստ է պարունակում եւ խօսում յաւակնութիւնների ու պատկերացումների մասին, ուրեմն ասելիքն այլ հարթութիւնում է: Դժուար է ասա տարբերել», - ասում է Սերժ Սարգսեանը: Այսօր էլ է պնդում, որ շարունակում է չյաւակնել այդ պաշտօնին, պարզապէս դրան կարող է գնալ միայն ու միայն ելնելով երկրի անվտանգութեան շահերից ու ընդունելով իր անփոխարինելիութիւնը: «Այո, ես այսօր էլ չեմ յաւակնում վարչապետի պաշտօնին: Բայց ես նախապաշարունակելով կամ քարացած մտածողութեամբ առաջնորդուող մարդինձ երբեք չեմ համարել: Ես չեմ կարող հաշուի չնստել իրականութեան հետ եւ համարել, որ չունեմ պատասխանատուութիւն ապագայի եւ ժամանակի մէջ մեր երկրի սահուն ընթացքի համար: Այսօր մենք մի կողմից ունենք արտաքին քաղաքականութեան դրական արդիւնքներ, որոնք ամբողջութեան լուրջ պաշար են տալիս մեզ, հասել ենք ներքին կայունութեան այնպիսի մակարդակի, որն արդէն դրականորէն կանխորոշում է նաեւ տնտեսական ցուցանիշների դինամիկան, բայց միւս կողմից չի կարելի հաշուի չառնել սպառնալիքները, որոնք սահմանադրական փոփոխութիւնների ընթացքում, ցաւօք, միայն աւելացել են. մենք անցանք ապրիլեան պատերազմ, տեսանք մայրաքաղաքում զէնքի ուժով հարցեր լուծելու պատրաստ մարդկանց գործողութիւններ, այսօր էլ տեսնում ենք ուժեր, որոնք, հաշուի չառնելով հնարաւոր հետեւանքներ-

ըր, պատրաստ են փողոցում խնդիրներ դնել, անկախ նրանից՝ այդ խնդիրները քաղաքազիտութեան եւ տրամաբանութեան շրջանակում են, թէ՛ ոչ:

Զգիտեմ այս քննարկումները երբ կ'աւարտենք: Բայց եթէ ի վերջոյ որոշենք, որ առաջադրուելու է իմ թեկնածութիւնը, ապա դա կը լինի իմ կողմից մէկ յաւակնումով՝ առ այն, որ սահմանադրական լիազօրութիւնների ամբողջական իրականացմանը գուզահեւ աւելի շատ ժամանակ եմ յատկացնելու երիտասարդ քաղաքական լիդերներին մեր երկրի անցած տարիների երեւացող ու չերեւացող ողջ փորձը փոխանցելու գործին: Սա մի խնդիր է, որն այսօր չափազանց կարեւոր է »:

Այսպիսով, Սերժ Սարգսեանը տուեց վարչապետի պաշտօնին անցնելու հիմնաւորումը՝ անվտանգութեան արտաքին ու ներքին սպառնալիքներ եւ դրանք դիմակայելու հարցում իր անփոխարինելիութիւնը, ինչի մասին արդէն մի քանի ամիս շարունակ բարձրաձայնում է ՀՀԿ էլիտան եւ յատկապէս, երիտհանրապետականները: Այս համատեքստում ուշագրաւ է նաեւ Սերժ Սարգսեանի կողմից քաղաքական սերնդափոխութեան հարցի կարեւորումը: Նա ըստ էութեան հասկացնում է, որ առաջիկայ տարիներին տարեցներեց ազատուելու խնդիր է իր առջեւ դնելու՝ ասպարեզը յանձնելով երիտասարդներին: Իսկ վերջիններիս ուղերձ է յղում ինքնադրսեւորուելու եւ անձնուրացութեան, քանզի յաջորդ ժամկէտին ինքը երիտասարդներից է ընտրելու իր ժառանգորդին:

« ՀԱՅԵԼԻ »

www.massisweekly.com

Մասիսա
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՍԱԹԵՐԹ՝
ՍՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժիրայր Սեֆիլեանը Դատապարտուեցաւ Տասը Տարի Զինգ Ամիս Բանտարկութեան



Ժիրայր Սեֆիլեան դատարանի նիստերէն մէկուն ընթացքին

«Հիմնադիր խորհրդարան»-ի առաջնորդ ժիրայր Սեֆիլեանը դատապարտուեցաւ 10 տարի չինգ ամսուան ազատազրկման:

Դատաւորը ամբողջութեամբ ապացուցուած համարեց, որ Սեֆիլեանը Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նախապատրաստած է գանգուածային անկարգութիւններ՝ իշխանութեան ներկայացուցիչին զինուած դիմադրութիւն ցոյց տալով, բռնութիւն գործադրելով, գոյք ոչնչացնելով եւ այլն, յետագային ալ՝ արդէն Սահմանադրական հանրաքուէին ընդառաջ, ապօրինի ձեռք բերած է հրազէն ու ռազմամթերք՝ նպատակ ունենալով գրաւել ռազմավարական նշանակութեան շէնքեր, իշխանութիւններուն պարտադրել ինչ-որ գործողութիւններ:

Աւելի քան տասը տարուան պատժաշար լսելով Սեֆիլեանը ծափահարած եւ ըսած է. - «Պրա՞ւօ, շուտով ձեզ համար են ընթերցելու այսպիսի վճիռներ»:

Գէորգ Սաֆարեան դատապարտուեցաւ 5,5 տարուան ազատազրկման: Դատաւորը, սակայն,

հաշուարկեց մէկ այլ՝ «տօնածառի» գործով Սաֆարեանի արդէն կրած երկու տարուան պատժաշար: Այսպիսին՝ Գէորգ Սաֆարեանը, ըստ էութեան, դատապարտուեցաւ 3,5 տարուան ազատազրկման:

Սաֆարեանը եւս ժպտով կը լսէր վճիռը: «Կեցցէ՞ ա՛յն Հայաստանը, որ վաղն է գալու», - բացականչեց ան:

Այս գործով անցնող միւս մեղադրեալներ Սասունիկ Կիրակոսեանը եւ Ներսէս Պողոսեանը դատապարտուեցան 3,5-ական, Գալուստ Գրիգորեանը եւ Հրայր Թովմեանն ալ՝ 3-ական տարուայ ազատազրկման:

Ներսէս Պողոսեանը կը հայհոյէր դահլիճի մէջ ներկայ մեղադրող դատախազին: Ոստիկանները զինք հրելով դուրս տարին դահլիճէն, թէեւ վճիռը դեռ կ'ընթերցուէր:

Ամենամեղմ՝ 2 տարուան ազատազրկման պատիժի արժանացաւ մեղադրեալ Յովհաննէս Պետրոսեանը: Ան միակն է, որ դատարանի մէջ Սեֆիլեանի դէմ ցուցմունք տուած է եւ փաստօրէն ընդամենը երկու ամիսէն ազատ կ'արձակուի:

«Ունենք Շատ Լաւ Զնարաւորութիւն՝ Զայաստանում Թռիչքային Աճ Ապահովելու Զամար»։ Կարէն Կարապետեան

«2017 թուականին մենք ունեցած ենք 7,5 տոկոս տնտեսական աճ. դա ամենամեծ թիւն է տարածաշրջանում, ԱՊՀ-ում, ԵԱՏՄ-ում», - յայտարարած է վարչապետ Կարէն Կարապետեանը՝ Պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրի մէջ Զինուած ուժերու ղեկավար կազմի գործնական հաւաքի մասնակիցներուն հետ հանդիպման ժամանակ:

Ըստ կառավարութեան պաշտօնական կայքէջին, վարչապետը նշած է, որ երբ 2016 թուականին հասոյթ կը ձեւաւորէին՝ նախատեսած էին 3,2 տոկոս տնտեսական աճ:

Կարէն Կարապետեանը ներկայացուցած է նաեւ 2018-ի Յունուար ամսուայ փոքր տնտեսական ցուցանիշները եւ նշած, որ 2016-ի Յունուարի համեմատ արձանագրուած են առաջնացիկ թիւեր:

Կարէն Կարապետեանի խօսքով, կառավարութիւնը բարեփոխումներ նախաձեռնած է բոլոր ոլորտներու մէջ՝ տարածքային կառավարման, հակակաշառակերութեան քաղաքականութեան, գիւղատնտեսութեան, տեղեկատուական թեխնոլոգիաներու, հարկային, մաքսային ոլորտներու, Հայաստանի թիւային օրակարգի եւ այլ ուղղութիւններով:

Կարէն Կարապետեանը ներկայ

ացուցած է ԵԱՏՄ-ի, ԵՄ-ի, ինչպէս նաեւ շարք մը այլ երկիրներու հետ համագործակցութեան շրջանակի մէջ Հայաստանի համար գործող արտօնեալ առեւտրային ձեւերը:

«Ներկայում ընթացքի մէջ են Հայաստանի զարգացման ծրագիր-2030-ի մշակման աշխատանքները, որտեղ դրուած են այն թիրախները, որոնք յայտարարել է երկրի նախագահը Ազգային ժողովում իր ելոյթում, եւ որի հիմքը կառավարութեան զարգացման 5-ամեայ ծրագիրն է: Պէտք է արձանագրել, որ դրուել է բաւական բարետեւեչ նշանող, բայց այն թիւը, որն ամէն օր աշխատում է այս ծրագրի վրայ, աւելի քան համոզուած է, որ մենք դա կարողանալու ենք անել», - ընդգծած է վարչապետը:

Ամփոփելով ելոյթը, վարչապետ Կարէն Կարապետեանը նշած է. - «Յանկանում եմ ձեզ շնորհակալութիւն յայտնել ձեր ծառայութեան համար եւ նաեւ մասամբ վստահութիւն փոխանցել, որ այն գործը, որ դուք անում էք, մենք՝ բոլորս, չափազանց բարձր ենք գնահատում: Չափազանց կարեւորագոյն գործառնոյթ է, առանց որի մեր երկիրն ապագայ չունի, եւ թիկունքում մենք ապահովելու ենք այն տնտեսական գործօնները, սոցիալ-տնտեսական զարգացումները,

«Ամէն Ինչ Պիտի Ընենք, որ Խաղաղ Իշխանափոխութիւն Ըլլայ»։ Քննարկում



Քննարկումին մասնակցող քաղաքական գործիչները

«Հանրահաւաքի, ընդլզման ընկերային-քաղաքական հիմքեր, անշուշտ, կան արդէն երկար ժամանակ, եթէ այդպիսի հիմքեր չըլլային, ապա չէր ըլլար ժողովուրդի համատարած դժգոհութիւնը, օրուան իշխանութիւններու նկատմամբ նոյնիսկ ատելութիւնը չէր ըլլար, մեր խնդիրը պարզապէս դժգոհութիւնը ընդլզման վերածելն է»:

Այս մասին «Մետիա կեդրոն»ի մէջ կայացած՝ «Յանուն Հայաստան պետութեան» ճակատի իշխանափոխութեան բանաձեւն ու յառաջիկայ քայլերը՝ թեմայով քննարկման ըսած է ՀՀ ԱԺ նախկին փոխնախագահ, «Յանուն Հայաստան պետութեան» ճակատի համակարգող խումբի անդամ Կարապետ Ռուբինեանը:

Անդրադառնալով այն դիտարկման, որ ԱԺ փոխխօսնակ էտուար Շարմազանովը նշած էր, թէ իշխանափոխութիւն կ'ըլլայ միայն ընտրութիւններու միջոցով, ճակատի համակարգողը հակադրած է. «Պարոն Շարմազանովին պէտք է մի պարզ հարց տալ. եթէ իշխանափոխութիւնը տեղի է ունենում ընտրութիւններու միջոցով, ինչո՞ւ մինչեւ հիմա իշխանափոխութիւն տեղի չի ունեցել Հայաստանում ընտրութիւնների միջոցով: Ես կը հասկանայի դա, եթէ ձափոնիայի պէս երկիր լինէինք, այդպիսի երկրներում լի-

պերայները կամ ազատականները 20 տարի շարունակ ընտրուած են, որովհետեւ երկիրը աշխարհի առաջատար պետութիւնների շարքում է՝ բարձրագոյն թեխնոլոգիաներով եւ ժողովրդավարութեամբ: Շարմազանովը չգիտի, թէ որ երկրում է ապրում: Կարծում եմ՝ շատ լաւ գիտի»:

«Յանուն Հայաստան պետութեան» ճակատի համակարգող խումբի անդամ Սուսաննա Մուրատեանն ալ, համաձայնելով Կարապետ Ռուբինեանի հետ, աւելցուցած է. «Քանի որ Սերժ Սարգսեանն այլ օրինական միջոց երբեք չի ունեցել՝ սկսած իշխանութեան գալու օրուանից առ այսօր, նա իր կառավարման փիլիսոփայութեան հիմքում դրել է սուտը, կեղծիքը եւ ամէն գնով վերարտադրուել է. նա ի սկզբանէ բերել է վերարտադրուելու գործիքները: Եթէ նոյնիսկ ընդդիմութիւնը կամ ժողովուրդն այդ գործիքներն օգտագործեն իշխանափոխութեան համար, որը դեռեւս տեղի չի ունեցել, որովհետեւ միայն տեղի է ունեցել իշխանութեան փոխանցում, ամէն ինչ անելու ենք, որ լինի խաղաղ իշխանափոխութիւն, այսինքն՝ այնքան ըմբոստութեան հնարաւորութիւն լինի, որ ճնշման տակ ուղղակի այսօրուայ ապօրինի իշխանութիւնները հասկանան, որ իրենք պէտք է թողնեն եւ հեռանան ու անպայման պատասխան պէտք է տան»:

«Ելք» Դաշինքը Որոշում կայացուցած է

«Ելք» դաշինքը Ազգային ժողովէն ներս կայացած դռնփակ նիստին որոշած է, որ Դաշինքի կազմի մէջ գտնուող կուսակցութիւններէն իւրաքանչիւրը իր ցանկութեամբ պայքար մղէ Սերժ Սարգսեանի վարչապետութեան դէմ: Այս մասին նիստէն յետոյ լրագրողներուն ըսած է ԱԺ Ելք խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը:

Ան նշած է, որ «Ելքը» բնականոն կը շարունակէ գործել խորհրդարանական հարթակի վրայ: Ան աւելցուցած է, որ դաշինքը խոչընդոտ չէ, որպէսզի կուսակցութիւնները իրենց առանձին որոշումները կայացնեն:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը, որ կը գլխավորէ Փաշինեանը, ներկայացուցած էր իր ճանապարհային քարտէզը, միւս կուսակցութիւնները ունին իրենց մօտեցումները:

որպէսզի դուք հանգիստ լինէք, որ ետեւում էլ կանգնած մարդիկ կան, որոնք իրենց բաժին բեռն էլ իրենց վրայ են վերցրել»:

Փաշինեանը ըսած է, որ կան սկզբունքային համընկնումներ եւ տարբերութիւններ: Բայց քննարկումները կրնան շարունակուիլ, նոր առաջարկներ կրնան ըլլալ:

«Այս պահին որոշումը հետեւեալն է՝ քանի որ մենք գործողութիւնների մասին չունենք 100 տոկոսանոց համընկնում, նրանք, ում համար այդ գործողութիւնները շուտ են սկսում, կայ ժամանակային խնդիր, ինքը կարող է իր որոշումները կայացնել, նոյնիսկ հրապարակել այդ որոշումները: Դա չի նշանակում, որ գործընկերների հետ քննարկումները դադարեցուած են: Բայց բոլոր քննարկումներու բոլոր սցենարներում փոփոց դուրս գալու տարբերակը կար, տարբերութիւնը վերաբերում է դրա ձեւերի մէջ: Եղած բոլոր ճանապարհային քարտէզներում այդպիսի հանգրուան կայ», ըսած է Փաշինեանը:

Նշեք, որ այս հաւաքին ելոյթ ունեցած են նաեւ նախագահ Սերժ Սարգսեանը եւ Արտաքին գործոց նախարար էտուար Նալպանտեանը:

ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանը Չի Շարունակեր Ատրպեյձանին Նոյն Չափով Զենքի Մատակարարումը

ՌԴ Դաշնային ժողովի Դաշնութեան խորհուրդի միջազգային գործերով կոմիտեի նախագահ Կոնստանդին Կոսաչովը ընդգծած է, որ Ռուսաստանը չի շարունակեր նոյն չափերով սպառազինություն մատակարարել Ատրպեյձանին, որ կար մինչև 2016թ. ապրիլեան պատերազմը: Հայաստանի Ազգային ժողովին ներս լրագրողներու հետ հանդիպման Կոսաչով նշեց, որ Ռուսաստանը կ'իրականացնէ այն պայմանագիրները, որոնք Ատրպեյձանի հետ կնքուած են մինչև 2016թ. Ապրիլ:

«Մենք պարտաւոր ենք ընել ան այդ պայմանագիրներուն համապատասխան: Սակայն իմ ունեցած տեղեկատուութեամբ ան չ'ըլլար այն չափերով, որ կար 2016թ. Ապրիլի դրութեամբ: Անկասկած, մենք կ'արձագանգենք իրավիճակին, որ տեղի ունեցաւ 2016թ. Ապրիլին», - «Արմենփրես»-ի հաղորդմամբ՝ ըսած է Կոնստանդին Կոսաչովը:

Անդրադառնալով դիտարկմանը, թէ ՌԴ նախագահը Չինաստան կատարած այցելութեան ընթացքին, մեկնաբանելով ԱՄՆ-ի կողմէն Ուքրանիոյ գէնքի մատակարարումը, անընդունելի էր համարել հակամարտող երկրին գէնք վաճառելը, սակայն միեւնոյն ժամանակ Ռուսաստանը գէնք կը մատակարարէ Ատրպեյձանին, Կոսաչով ըսաւ.

«Վլատիմիր Փութինը խօսած է այն երկրներու մասին, ուր հակամարտութիւնը թէժ փուլի մէջ են, ուր իսկապէս կը կրակեն, իսկ Ուքրանիոյ մէջ իսկապէս կը կրակեն: Լեռնային Ղարաբաղի մէջ, բարեբախտաբար, այս պահին այդպիսի իրավիճակ չկայ»:

Հայաստանը Պատրաստ է Անվտանգութեան Բնագաւառէն Ներս Ընդլայնել Լիբանանի Հետ Համագործակցութիւնը

«Հայաստանի համար Լիբանանի կարեւորութիւնը պայմանաւորուած է միայն այս երկրի տարածաշրջանային նշանակութեամբ: Դարեր շարունակ հայ ժողովուրդը Մերձաւոր Արեւելքի եւ լիբանանեան խճանկարի ինքնատիպ մաս է կազմել»:

Այս մասին յայտարարած է Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեանը՝ ելոյթ ունենալով Լիբանանի անվտանգութեան ուժերուն աջակցութեան վերաբերեալ նախարարական համաժողովին:

ԱՆ նշած է. «Այսօր նրանք ներկայացուած են ե՛լ կառավարութիւնում, ե՛լ խորհրդարանում: Հայերը կիսել են բոլոր այն դժուարութիւնները, որոնք բախուել է Լիբանանի ժողովուրդը, եւ պատրաստակամ են այսուհետ եւս իրենց ներդրումը բերել պետութեան ապահով ու անվտանգ ապագային: Այս նպատակին հասնելու ճանապարհին Հայաստանի Հանրապետութիւնը կանգնած է Լիբանանի ժողովուրդի կողքին: Հայաստանը բազմիցս իր աջակցութիւնն է յայտնել Լիբանանի բարեկամ ժողովուրդին: Այն եւս մէկ անգամ վերահաստատուել է փետրուարին Լիբանանի նախագահի՝ Երեւան կատարած պաշտօնական այցի, ինչպէս նաեւ օրեր առաջ ՀՀ վարչապետի՝ Լիբանան կատարած պաշտօնական այցի ընթացքում»,- ըսած է նախարարը:

Նալպանտեանը լիշեցուցած է, որ նոյեմբեր 2014-ին, 32 խաղաղապահներէ բաղկացած հայկական դասակը՝ իտալական հրամանատարութեան ներքոյ ծառայութիւն կ'իրականացնէ Լիբանանի մէջ Միաւորուած Ազգերու Կազմակերպութեան ժամանակաւոր ուժերու (ԵՈՒՆԻՖԻԼ) կազմի մէջ:

ՀՀ ԱԳ նախարարն ընդգծած է, որ Հայաստանը պատրաստ է ընդլայնել Լիբանանի հետ պաշտպանութեան եւ անվտանգութեան բնագաւառներու մէջ համագործակցութիւնը՝ հիմնուած արդէն իսկ սեղանի վրայ գտնուող յստակ առաջարկներու, ինչպէս նաեւ նոր գաղափարներու հիման վրայ:

Ալիեւը Հայաստանի Նկատմամբ Միջազգային Պատժամիջոցներու Կոչ Կ'ընէ

Ատրպեյձանի նախագահը կոչ ըրած է միջազգային հանրութեան՝ պատժամիջոցներ սահմանել Հայաստանի նկատմամբ:

«Ղարաբաղեան խնդրի չկարգաւորուելու միակ պատճառը Հայաստանն է, որ կը հրաժարի ազատել գրաւած տարածքները», - պնդած է Իլհամ Ալիեւը, ելոյթ ունենալով Պաքուի վեցերորդ միջազգային համաժողովին, որուն մասնակցած էին տասնեակ երկիրներու գործող ու նախկին պաշտօնեաներ:

«Ներկայիս հաստատուած սահմանը չի կրնար չաւեր շարունակուել, որու մասին նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող երկիրները յայտարարած են: Այս հակամարտութիւնը ոչ միայն անարդարութիւն է, այլեւ տարածաշրջանի մէջ մշտական սպառնալիքի ու անկայունութեան աղբիւր», - ըսած է Իլհամ Ալիեւը:

Ղարաբաղեան խնդրի մասին խօսած է նաեւ համաժողովին մասնակցող Թուրքիոյ վարչապետը՝ պնդելով, թէ Անգարան այս հարցին մէջ մշտապէս եղած է եւ կը մնայ Ատրպեյձանի կողքին: «Եթէ մեր եղբայրական պետութեան սպառնանք, անմիջապէս պատասխան կը ստանան», - յայտարարած է Պինալի Երլարըմը:

Միջազգային համաժողովէն բացի Պաքուի մէջ մեկնարկած է նաեւ Ատրպեյձանի, Թուրքիոյ, Վրաստանի ու Իրանի արտաքին գործոց նախարարներու առաջին քառակողմ հանդիպումը, որու աւարտին չորս երկիրները համատեղ հռչակագիր ընդունած են՝ աջակցութիւն յայտնելով միմեանց տարածքային ամբողջականութեանն ու սահմաններու անփոփոխելիութեան:

Հռչակագիրին մէջ նշուած է, որ Ատրպեյձանը, Վրաստանը, Իրանն ու Թուրքիան կ'ուզեն ամրապնդել տարածաշրջանի խաղաղութիւնն ու անվտանգութիւնը:

Արցախի Նախագահի Հանդիպումները ԱՄՆ Քոնկրեսի Մէջ



Բակո Սահակեան ելոյթ կ'ունենայ Գոնկրեսէն ներս կազմակերպուած ընդունելութեան ընթացքին

Ուաշինկթըն կատարած իր այցելութեան շրջագիծէն ներս Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան հանդիպում ունեցած է Գոնկրեսի արտաքին հարցերով յանձնաժողովի խումբ մը անդամներու հետ, քննարկած Արցախ-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն, ատրպեյձանա-ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման եւ տարածաշրջանային գործընթացներուն վերաբերող հարցեր:

Այնուհետեւ Յանձնաժողովը ընդունելութիւն կազմակերպած է՝ նուիրուած Արցախեան շարժման 30-րդ տարեդարձին:

Իր խօսքին մէջ Նախագահը կարեւորած է Միացեալ Նահանգներու օրէնսդիր բարձրագոյն մարմինի մէջ կազմակերպուած հանդիպումները, նշելով, որ անոնք

նաեւ կը մեծցնեն պատասխանատուութեան աստիճանը՝ յամառ ու քրտնաջան աշխատանք իրականացնելու, երկկողմ յարաբերութիւններն ալ աւելի խորացնելու ու զարգացնելու գործին մէջ:

Բակո Սահակեանը նշած է, որ հանրապետութեան մէջ կը կարեւորեն ամերիկացիներու սատարումը Արցախին, եւ այստեղ իրենց ուրոյն տեղը ունին ԱՄՆ Գոնկրեսի Ներկայացուցիչներու պալատն ու ծերակոյտը, բարեկամ երեսփոխաններն ու ծերակուտականները:

Նախագահը Արցախի Հանրապետութեան պետական պարզեւներ յանձնած է ԱՄՆ խումբ մը գոնկրեսականներու՝ Արցախին սատարելու եւ Արցախ-ԱՄՆ յարաբերութիւններու զարգացման գործին մէջ շօշափելի ներդրում ունենալու համար:

«Հինգ Շրջաններ Յանձնելու Մասին Խօսակցութիւնները Լուրջ Չեն», Կ'ըսէ Շաւարշ Քոչարեանը

Հինգ շրջաններ յանձնելու մասին խօսակցութիւնները Ատրպեյձանը կը տարածէ կամ իր, կամ այլ անձերու միջոցով, նման բան գոյութիւն չունի: Այս մասին ԱԺ-ի մէջ լրագրողներու հետ գրոցի ընթացքին նշած է Հայաստանի ԱԳ փոխնախարար Շաւարշ Քոչարեանը:

Անդրադառնալով բանակցութիւններուն, ան ընդգծած է. «Մենք միշտ պէտք է գիտակցենք, որ բանակցութիւններն ունեն երկու հարթութիւն՝ նախ ստեղծել համապատասխան մթնոլորտ բանակցութիւններում առաջընթաց արձանագրելու համար, միւսը՝ բուն բանակցութիւնները, որոնք ուղղուած են առաջընթացին: Բնական է, որ դա համանախագահները յստակ գիտակցում են եւ ուղղակի յայտարարել են, որի մասին են խօսում եւ վիեննայի, եւ Սան-Քեթերպուրկի, եւ Քրաքովի պայմանաւորուածութիւնները, որպէսզի բանակցային

գործընթացում հնարաւորութիւն լինի խօսել առաջընթացի մասին, անհրաժեշտ է, որ կողմերի միջեւ լինի վստահութիւն: Վստահութեան անհրաժեշտ մասը նրանում է, որ կողմերը չկրակեն, սաղրանքներ չկազմակերպեն: Այդ իսկ պատճառով խօսուել է եւ հետաքննութեան մեխանիզմի ձեւաւորման մասին, եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչի՝ Քասփրշիկի մշտադիտարկման խումբի կարողութիւնների աւելացման մասին:

Ինչ կը վերաբերի 5 շրջաններ յանձնելու մասին պայմանագրի առկայութեան, որու մասին վերջերս խօսած էր «Միջազգային եւրասիական շարժման» ղեկավար, քաղաքագետ Ալեքսանտր Տուկիւնը, Շաւարշ Քոչարեանը յայտնած է, որ այդ Ատրպեյձանի ցանկութիւնն է, որ ինքը պարբերաբար կամ իր բերնով կամ այլ անձանց բերնով կը փորձէ սփռել մամուլին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Արմեն Սարգսեանը Նիւ Եորքի Մէջ Հանդիպած Է Հայ Համայնքի Ներկայացուցիչներու Հետ

Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի կողմէն ՀՀ չորրորդ նախագահ ընտրուած Արմէն Սարգսեանը Մարտ 12-ին Նիւ Եորքի մէջ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) կեդրոնական գրասենեակի մէջ հանդիպած է հայ համայնքի երիտասարդ մասնագէտներու հետ:



«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ իր ելույթին ընթացքին Արմէն Սարգսեանը նշած է, որ պատերազմի, նիւթական անյաջողութիւններու եւ ընկերային դժուարութիւններու ժամանակաշրջանին յետոյ Հայաստանը պատրաստ է հասնիլ «փոքր հանրապետութիւն, բայց կլոպալ ազգ» երազանքին:

Անդրադառնալով սփիւռքի ներգրաւուածութեան հայրենիքի մէջ տեղի ունեցող գործընթացներուն՝ Սարգսեանը ըսած է. «Դուք պէտք է պահէք անձնագիրը ձեր հոգում եւ հաւատաք, որ այդ երկրի քաղաքացին էք: Դուք պէտք է հաւատաք, որ հայաստանցի էք եւ Հայաստանը պէտք է հաւատայ, որ դուք հայ էք: Հայաստանը պէտք է լինի ձեր հայրենիքը եւ պէտք է հոգ տանի ձեր մասին»:

Ան կարեւորած է արցախեան պատերազմի մէջ տօնած յաղթանակը՝ նշելով, որ հարիւրաւոր տարիներ անց հայերը ցոյց տուին, որ կրնան ըլլալ յաղթանակող:

Սարգսեանը նշած է, որ Հայաստանը իւրօրինակ երկիր է, ով կը համագործակցի թէ ԵԱՏՄ, թէ ԵՄ

հետ: «Մենք միակ երկիրն ենք, որը լաւ յարաբերութիւններ ունի թէ Եւրամիութեան, թէ Եւրասիոյ հետ: Սա ֆանտաստիկ հնարաւորութիւն է: Մենք պէտք է խելացի գտնուենք օգտուելու այդ հնարաւորութիւնից», - ըսած է ՀՀ նորընտիր նախագահը՝ աւելցնելով, որ «Հայաստանը պէտք է ընկերներ ունենայ ամէնուրեք»: Ան կարեւորած է Հայաստանի մէջ տարբեր ոլորտներու մէջ կաշառակերութեան դէմ պայքարելու անհրաժեշտութիւնը՝ ընդգծելով, որ այդ ոչ միայն կառավարման կամ օրէնքներ ընդունելու հարց է, այլ պատասխանատու քաղաքացիներ պատրաստելու անհրաժեշտութիւն: «Դա է առաջընթացի ճանապարհը, եւ նախագահը պէտք է օգտագործի իր լիազօրութիւնները յանուն այդ գաղափարի: Նախագահը պէտք է ճիշդ օրինակ լինի քաղաքացիներին համար», - ըսած է ան:

Արմէն Սարգսեանը Ազգային ժողովին ՀՀ նախագահ ընտրուած է Մարտի 22-ին, ան իր լիազօրութիւնները կը ստանձնէ ԱԺ յատուկ նիստին Ապրիլի 9-ին:

«Mosshoes 2018». Հայկական Կօշիկը Մոսկուայի Միջազգային Ցուցահանդեսին Կը Մասնակցի



Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցութեամբ մեր երկրի 8 ձեռնարկութիւն աշխարհի աւելի քան 1,000 ապրանքանիշներու շարքին Մարտի 13-16-ը Մոսկուայի մէջ կը մասնակցի «Mosshoes 2018» կօշիկի եւ կաշեայ զարդեղէններու մասնագիտացուած ցուցահանդէսին:

Հիմնադրամէն NEWS.am-ին յայտնած են, որ «Mosshoes» միջազգային ցուցահանդէսը այս տարի 75-րդ անգամ համախմբած է արտադրողներուն՝ աշխարհի 30 երկիրներէ, կը սպասուի աւելի քան 15,000 միջին եւ խոշոր գնորդներու, մատակարարներու այցելութիւն: Միասնական տաղաւարի մէջ հայկական ընկերութիւնները միջազգային գնորդներուն կը ներկայացնեն բնական եւ փոխարինող կաշեայ կօշիկներ, պայուսակներ, զարդեղէններ եւ այլ արտադրատեսակներ: Նախորդ տարի գարնան եւ աշնան կայացած «Mosshoes» էքսպոնէրու որպէս արդիւնք հայկական 18 ընկերութիւն կնքած են շուրջ 682 միլիոն դրամի արտահանման պայմանագիրներ:

«Mosshoes»-ը Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի կաշեայ իրերու խոշորագոյն ցուցահանդէսներէն է: 4 օր հայ արտադրողները հնարաւորութիւն ունին ներկայացնելու, բանակցելու տասնեակ մատակարարներու հետ, պայմանագիրներ կնքելու, գործարար կապեր հաստատելու, հետեւելու միջազգային միտումներուն եւ, որպէս արդիւնք, աւելցնելու արտահանման ծաւալները»,- նշած է ՀՀ Միջազգային համագործակցութեան ղեկավար Նարեկ Ալեքսանեանը:

Հայաստանի զարգացման հիմնադրամը միջազգային էքսպոնէրին հայկական ընկերութիւններու մասնակցութեան աջակցած է արտահանման խթանման ՀՀ կառավարութեան քաղաքականութեան շրջանակին մէջ:

44 Հազար Սարդ Հեռացած Է

Շարունակուած է 1-էն

կօրէն առաջնային են աշխատանքային-տնտեսական գործօնները: Բուն աշխատանքային պատճառները երկուքն են՝ աշխատանք չըլլալն ու մասնագիտական աշխատանք չըլլալը: Կայ նաեւ երկու տնտեսական պատճառ՝ տնային տնտեսութեան համար գումար վատակել, առաւել բարձր վարձատրութեամբ աշխատանք գտնել:

Ժողովրդագիրը տեղեկացուցած է, որ հարցադրումը իրականացուած է մօտ 3000 տնային տնտեսութիւններու մէջ եղող անդամներուն հետ: Ըստ Եգանեանի՝ գաղթը միակողմանի չ'ըլլար, այն ալ՝ մեր պարագային, երբ աշխատանքային գաղթ կայ. վերադարձողներ կ'ըլլան: Պատկերի վրայ ազդեցութիւն ունեցած է նաեւ վերջին տարիներուն սուրիահայ փախստականներու ներհոսքը:

Եգանեանի խօսքով՝ քանի որ հիմնական հոսքերը կը ձեւաւորեն աշխատանքային գաղթերը, այդ մարզային երեւոյթ է, սակայն կարելի է ըսել, որ Երեւանի մէջ չկայ երեւանի մէջ աշխատանքային գաղթերը քիչ են: Ամէնէն շատ կը մեկնին այն մարզերէն, ուր ոչ բարձր վիճակ է, առաջամարտիկները Գեղարքունիքի, Շիրակի ու Լոռիի հիւսիսային տարածքի բնակիչներն են:

Խօսելով 2040-ին Հայաստանի

բնակչութեան 4 միլիոնի հասնելու հեռանկարի մասին, Եգանեան նշած է, որ անձամբ չէ լսած այդ մասին, լսած է, որ այդ ոչ թէ խնդիր է, այլ ընդամէնը նպատակ: Անոր խօսքով՝ այդ թիւին հասնիլը կը պահանջէ բոլոր միջոցներու գերլարում:

Ծնունդի նուազման երեւոյթը, ըստ բանախօսի, կը շարունակուի՝ թէ բացարձակ թիւով, թէ յարաբերական մեծութեամբ, եւ սա անխուսափելի երեւոյթ է:

Ան նշած է, որ երբ 2003-2004 թուականներուն սկսած ցուցանիշը բարձրացած է, ոչ մասնագէտներու մօտ յաղթարուցութիւն ստեղծուած է, թէ այդ թիւի հարմարեցում է վիճակը, բայց այդ ընդամէնը պայմանաւորուած էր ժողովրդագրական ալիքի ներգործութեամբ. 80-ականներու վերջերուն մեծաթիւ սերունդը մտած էր վերարտադրողական տարիք, իրենք շատ էին, շատ ալ երեխաներ պիտի ծնէին, բայց իրենց մէջ յետոյ պիտի գային 90-ականներու, ապա 2000-ականներու սերունդները: Ամենամեծ ցուցանիշը եղած է 1986 թուականը՝ 81 100 ծնունդ, մօտաւորապէս նոյն թիւն էր յետերկրաշարժեան շրջանին, իսկ 2002-ին ծնած է ընդամէնը 32 000 երեխայ, հիմա ծնող տարիք սկսած են մտնել այդ սերունդի ներկայացուցիչները, ընդ որում՝ անոնց մէկ մասը հեռացած է, մէկ մասը չկայ:

Սերժ Սարգսեան Պատրաստ Է

Շարունակուած է 1-էն

նա ասում է՝ ես չեմ լինելու այսինչ տեղում, ինչպէս ես յստակ յայտարարել եմ, որ չեմ լինի Հայաստանի Հանրապետութեան նախագահ: Բայց երբ պնդումը քաղաքական համատեքստ է պարունակում եւ խօսուած յաւակնութիւնների ու պատկերացումների մասին, ուրեմն ասելիքն այլ հարթութիւնում է»:

Միւս կողմէ, առ այժմ երեք տարբեր ուժեր յայտարարած են որ, փողոցային պայքար սկսած են Սերժ Սարգսեանի վարչապետութեան դէմ:

Սերժ Սարգսեանի «երրորդ ժամկէտի դէմ» պայքար սկսելու մասին յայտարարեց Ազգային ժողովի պատգամաւոր՝ Նիկոլ Փաշինեանի զլխաւորած «Քաղաքացիական պայքար» կուսակցութիւնը:

Թուրք Դասախօսը Կը Մեղադրուի

Շարունակուած է 1-էն

նշուած է, որ էրճիյէսի համալսարանի մէջ հայերուն վերաբերող 2 գիտաժողով կազմակերպուած է, որոնք իրականացուած են FET-ի «Կրօններու միջեւ երկխօսութիւն եւ համերաշխութիւն» նախաձեռնութեան շրջանակներում մէջ:

Նաեւ կը նշուի, որ Պաթմազը հիւրընկալած է Հայոց պատրիարքին, Հայաստանի մէջ մասնակցած է գիտաժողովի եւ «էրճիյէս»-ի համալսարանի մէջ FETԾ-ի անդամներու հետ իրականացուած է հայերէն

ներողութիւն խնդրելու արշաւը: Մեղադրականի այն հատուածի մէջ, որ կը վերաբերի Կիւլենի ծագման, մեջբերուած են Պաթմազի խօսքերը.

«Երբ որպէս պատմաբան կը վերլուծեմ՝ հաշուի առնելով անոր բնակութեան տարածքը, կը մտածեմ, որ Կիւլենը հայկական ծագում ունի: Էրզրումի մէջ, ուր ծնած է Կիւլենը, անցեալին շատ խիտ հայկական բնակչութիւն եղած է: Կը կարծեմ նաեւ, որ ան ծառայած է Ամերիկայի ծաւալապաշտական գործունէութեան»:

Վիրահայոց Թեմը Դատ Բացած է Վրաստանի Դեմ Պահանջելով Վերադարձնել Թիֆլիսի Սուրբ Աստուածածին Եկեղեցին



Հայ Առաքելական Եկեղեցուց Վիրահայոց թեմը դատի տուած է Վրաստանի իշխանութիւնները՝ պահանջելով վերադարձնել 19-րդ դարուն կառուցուած Թիֆլիսի Սուրբ Աստուածածին եկեղեցին:

Կիսաւեր տաճարը, որ առաւել յայտնի է որպէս Թանդոյեանց եկեղեցի, անցած տարի, կառավարութեան որոշմամբ, փոխանցուած է Վրաց ուղղափառ եկեղեցուց՝ չնայած հայերու շարունակական բողոքներուն:

Հիմա Վրաց պատրիարքարանը այդ տարածքին մէջ հետազոտական աշխատանքներ կ'իրականացնէ, իբրեւ թէ այն վերականգնելու նպատակով: Վիրահայերը, սակայն, մտաւարկութիւն ունին, թէ որպէս արդիւնք Թանդոյեանցը կրնայ վերջնականապէս հողին հաւասարի:

Վրաց պատրիարքարանը, ըստ էութեան, չի ալ թաքցներ, որ նկրտումներ ունի այդ տարածքի նկատմամբ: Պատրիարքարանի ներկայացուցիչ Լեւան Մերապիչվիլին կը պնդէ՝ Թանդոյեանցի տեղը ժամանակին վրացական եկեղեցի եղած է եւ հիմա իրենք «պարզապէս կ'ուզեն պատմական արդարութիւնը վերականգնել»:

Վրաստանի հայերը անհեթեթ ու անհիմն կ'որակեն այս պնդումները: Թեմի ներկայացուցիչ Միխայիլ Աւագեանը լիջեցուցած է՝ Թանդոյեանցը հայկական համայնքէն բռնագրաւուած էր դեռ խորհրդային տարիներուն:

90-ականներէն եկեղեցին կը գտնուի լքուած ու ամալի վիճակի մէջ, ու թէեւ հայերը շարունակաբար խնդրած են այն վերադարձնել, պաշտօնական Թիֆլիսը չէ համաձայնած:

Անկախ փորձագէտները եւս կը պնդեն՝ գոյութիւն ունեցող աղբիւրները չեն հաստատեր, որ Թանդոյեանցի տարածքին մէջ աւելի վաղ վրացական եկեղեցի եղած է:

Այս հարցով դատաքննութիւն կատարուած է եւ առաջին նիստը, ըստ էութեան, չսկսած՝ յետաձգուած է. կողմերը ժամանակ խնդրած են՝ գործին մէջ նոր փաստեր ու ապացոյցներ ներառելու համար:

«Շատ Տպաւորիչ է Պէյրութի Կեդրոնում Նման Կրթօճախ Տեսնել»։ Կարէն Կարապետեանը Այցելած է Հայկազեան Համալսարան

Շատ տպաւորիչ է Պէյրութի կեդրոնը նման կրթական օջախ տեսնել՝ ե՛ւ հայկական, ե՛ւ միջազգային, ե՛ւ լաւատես այլ մշակութիւններու նկատմամբ: Պաշտօնական այցով Լիբանան գտնուող վարչապետ Կարէն Կարապետեանը այս մասին ըսած է Հայկազեան համալսարան այցի ընթացքին:

Համալսարանի տնօրէն Փօլ Հայտոսթեանը վարչապետին ծանօթացուցած է ուսումնական հաստատութեան գործունէութիւնը եւ կրթական ծրագիրները, ներկայացուցած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած յուշարձանը եւ համալսարանի բակին մէջ տեղակայուած հրթիռի յուշարձանը, որու հեղինակը հայ է: Կարէն Կարապետեանը ծանօթացած է նաեւ հայագի նկարիչ Ռաֆֆի Ետալեանի ստեղծագործութիւններուն եւ զրառում կատարած Հայկազեան համալսարանի Պատուոյ հիւրերու գիրքին մէջ:

«Շատ տպաւորիչ է այստեղ՝ Պէյրութի կեդրոնում, նման կրթական օջախ տեսնել՝ ե՛ւ հայկական, ե՛ւ միջազգային, ե՛ւ հանդուրժող այլ մշակութիւնների նկատմամբ: Չափազանց կարեւոր է եւ չափազանց ոգեւորիչ: Ցանկանում եմ ձեզ շնորհակալութիւն յայտնել՝ ձեր կատարած գործի համար, եւ ուզում եմ, որ չյոգնէք, որովհետեւ չկայ աւելի շնորհակալ գործ, քան կրթելը: Ամենամեծ կարիքը մենք ձեր մէջ ունենք եւ շնորհակալ ենք հայապահպանութեան ուղղութեամբ ձեր նուիրուած աշխատանքի համար», - նշած է Կարէն Կարապետեանը:

Անդրադառնալով իր պաշտօնական այցի օրակարգին՝ Կարէն Կարապետեանը նշած է, որ բաւա-

կան շատ ու արդիւնաւէտ հանդիպումներ ունեցած է ե՛ւ Լիբանանի դեկավարութեան, ե՛ւ առեւտուրի միջավայրի ու դրամատնային ոլորտի ներկայացուցիչներուն հետ: «Մենք շատ երախտապարտ եւ շնորհակալ ենք Լիբանանին այն վերաբերմունքի համար, որ ցուցաբերում է հայ համայնքի նկատմամբ: Շնորհակալ ենք Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման համար, Յեղասպանութեան տարիներին մեր հայրենակիցներին ցուցաբերած հիւրընկալութեան եւ օժանդակութեան համար: Բայց մենք նաեւ արձանագրել ենք, որ ունենալով շատ բարձր մակարդակի քաղաքական յարաբերութիւններ՝ իրականում եղբայրական եւ բարեկամական, տնտեսական յարաբերութիւններու, տնտեսական բաղադրիչի մէջ ետ ենք ընկել եւ, մեր պատկերացմամբ, առաջարկել ու ներկայացրել ենք այն առաւելութիւնները, որոնք այսօր Հայաստանն ունի: Համոզուած եմ, որ մենք որոշակի հետաքրքրութիւն ենք առաջացրել Լիբանանի պիզնես միջավայրում, բանկային միջավայրում, եւ մօտ ժամանակներս յետադարձ կապ կ'ունենանք», - մասնաւորապէս ըսած է վարչապետը:

Կարէն Կարապետեանը այցելած է նաեւ Լիբանանի հայ հոգեւոր, մշակութային ամենաշնչանաւոր օջախներէն՝ Զմմաուի վանքը: Կարապետեան հանդիպած է Հայ կաթողիկէ պատրիարքարանի հոգեւոր ներկայացուցիչներու եւ Զմմաուի վանքի միաբանութեան անդամներու հետ, շրջած է վանական համալիրի տարածքին գտնուող եկեղեցին, թանգարանը եւ մատուռը:

ARMENIAN COUNCIL OF AMERICA
Presents a special screening of
Intent to Destroy
Death, Denial & Depiction
Sunday April 08 2018
at 3:00 pm
INTENT TO DESTROY, Pulling back the curtain on Genocide censorship in Hollywood due to U.S. government pressure to appease a so-called strategic ally. Intent To Destroy embeds with a historic feature production as a springboard to explore the violent history of the Armenian Genocide and legacy of Turkish suppression and denial over the past century.
United Artist La Canada 8
1919 Verdugo Blvd. La Canada Flintridge, CA
Limited Seating
To Reserve Tickets Call:
818.660.5142
www.ArmenianCouncil.org
@ArmenianCouncil
facebook.com/ArmenianCouncil

ՀԲԸՄ-ի «ՀԱՅ ԿԻՆ»-ի 12-րդ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ԱՊՐԻԼ 7-ԻՆ

«Երիտասարդներու ազդեցութիւնը մեր ապագային վրայ»

Յառաջիկայ Ապրիլի 7-ին, 2018, տեղի պիտի ունենայ «Հայ կին» ընկերակցութեան եւ անոր «Երիտասարդ շրջանակ»-ի կազմակերպած օգտաշատ եւ շատ կարեւոր միջազգային 12-րդ համաժողովը, ՀԲԸՄ-ի վաչէ եւ թամար Մանուկեան կեդրոնէն ներս, Փաստինա, առաւօտեան ժամը 10:00-էն սկսեալ (արձանագրութիւնները կը սկսին առաւօտեան ժամը 9:00-ին): Համաժողովին խորագիրն է՝ «Երիտասարդներու ազդեցութիւնը մեր ապագային վրայ»:

Այդ օր, համայնքէն չորս ակաւնաւոր դէմքեր, դասախօսներ եւ փորձագէտներ պիտի անդրադառնան կարեւոր նիւթերու, քննարկելով Հարաւային Քալիֆորնիոյ հայ համայնքին երիտասարդութեան ներկայ վիճակը: Միաժամանակ, «Հայ կին» երիտասարդական շրջանակ»-ի անդամները պիտի ներկայացնեն ներկայ հայ երիտասարդը յուզող ընդհանուր հարցեր:

Օրուան առաջին բանախօս՝ Դանիէլ Ֆիթանթէ, UCLA-ի փիլիսոփայական գիտութիւններու եւ Մերձաւոր արեւելեան լեզուներու եւ մշակութիւններու մասնագէտ, պիտի քննարկէ Քալիֆորնիոյ հայ համայնքի պատմական անցեալը:

Երկրորդ բանախօսն է Գեղամ Մուղնեցեան, Հարաւային Քալիֆորնիոյ համալսարանի հայկական ուսումնասիրութիւններու մասնագէտ, որ պիտի ներկայացնէ ցեղ, երկիր եւ քաղաքացիութիւն հասկացողութիւնները:

Յաջորդ բանախօսը՝ Գրիգոր Ս. Գրիգորեան, փոխ նախագահ Կլէնտէյլի հանրային դպրոցներու

կրթական խորհուրդի, պիտի քննարկէ ընտանիքի եւ համայնքի կարեւոր դերերն ու «հայրենիքի կանչ»ը:

Քալիֆորնիոյ Պետական համալսարանի դասախօս եւ նկարիչ Ռիչըրտ Չէմպլըզ պիտի ըլլայ այս համաժողովի վերջին դասախօսը, եզրակացնելով, թէ մարդ ինչպէ՞ս կրնայ գտնել իր ինքնութիւնը եւ համակերպիլ այդ իրականութեան հետ, ցուցադրելով նաեւ տեսերիզ մը այս մասին:

Համաժողովի աւարտին առիթ պիտի տրուի հարցումներ ուղղելու բանախօսներուն, այս նիւթերուն վերաբերեալ: Տարբեր համալսարաններու հայ ուսանողական միութիւններ պիտի մասնակցին այս համաժողովին եւ ընդհանուր առմամբ նպատակն է ներկայացնել այսօրուան հայ երիտասարդը յուզող կարեւոր հարցերը եւ մարտահրաւէրները:

Հայ երիտասարդը Հայաստանի ապագան է եւ այս տեսակի համաժողովները անպայման կ'ունենան իրենց դրական ազդեցութիւնը եւ կարեւորութիւնը թէ՛ հայ նոր սերունդին եւ թէ՛ հայրենիքի բարգաւաճման եւ ինչու չէ նաեւ հայապահպանման գործընթացին մէջ:

Յարատեւ յաջողութիւն «Հայ կին» ընկերակցութեան եւ անոր «Երիտասարդ շրջանակ»-ին այս կարեւոր եւ պատասխանատու գործին մէջ, ինչպէս նաեւ անոր այլ աշխատանքներուն եւ առաքելութիւններուն մէջ, ըլլայ սփիւռքի եւ ըլլայ հայրենիքի տարածքին:

ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՇԲԵՂ ԸԱՇԿԵՐՈՅԹ Ի ՆՊԱՍՏ ՔԱՐՎԱԾԱՌԻ ԿԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՐՑԱԽԵԱՆ ԾՐԱԳՐԻՆ



Անցեալ շաբաթավերջին Լոս Անճելոսահայ գաղութէն ներս մշակութային եւ ընկերական այլազան ծրագրերու առումներ, ինքնատիպ եւ ուշագրաւ միջոցառում մըն էր, Քարվաճառը վերակառուցելու արցախեան ծրագրի յանձնախումբի նախաձեռնութիւնը:

Արդարեւ, Մարտ 18, 2018ին, Կլէնտէյլի «Ֆինիշիա» սրահը ժամադրաւայրը դարձած էր շուրջ 200 հրաւիրեալներու, որոնք կը ներկայացնէին Հարաւային Քալիֆորնիոյ եկեղեցական, մշակութային, բարեսիրական, հայրենակցական միութիւններն ու հայ մամուլը: Ներկայ էին նաեւ Հայաստանի Աւագ Հիւպատոսութենէն Տիար Ռազմիկ Ստեփանեանը եւ Նահանգային Երեսփոխան Տիար Ատրին Նազարեանը:

Ամերիկայի, Հայաստանի եւ Արցախի քայլերգներու ունկնդրութենէն ետք, հոգեւորականներու կողմէ տեղի ունեցաւ սեղաններու օրհնութիւնը:

Օրուան հանդիսավարներու Արմինէ Զաքարեանի (հայերէն) եւ Ֆրետ Սարգիսեանի (անգլերէն) բացման ջերմ խօսքերէ ետք ելոյթ ունեցաւ սոյն միջոցառումը կազմակերպող Արարատ Հիմնադրամի նախագահ եւ համահիմնադիր Լաուրա Մելիքեան: Ան ամփոփ գիծերով ներկայացուց իր միութեան առաջարկներն որ է սատարել ազատագրուած Արցախի մեր հայրենակիցներու առաջնահերթ կարիքներու, յատկապէ ընկերային, կրթական եւ մշակութային բնագաւառներուն մէջ: Իսկ ներկայ հանգրուանին իր կազմակերպութիւնը ծրագրած է հիմնովին վերանորոգել Նոր Շահումեանի շրջանի Քարվաճառ ավանի պատանեկան եւ երիտասարդական մշակութային կեդրոնը, որ ներկայիս շատ խղճալի վիճակի մատուած է: Նախատեսուած է հիմնովին վերանորոգել 300 տեղանոց հանդիսասրահը, գալն արդիականացնել ժամանակակից սարքաւորումներով, բեմով, պատուհաններով, դռներով ու կենցաղային այլ յարմարութիւններով: Նմանապէս ծրագրուած է մշակույթի կեդրոնն օժտել հինգ սենեաներով, որոնք պիտի ծառայեն շրջանի բնակչութեան այլ կարիքներուն:

Վերակառուցուելիք մշակութային կեդրոնի այժմու վիճակի մասին ցուցադրուեցաւ տեսերիզ մը եւ յատուկ բացատրութիւններ տրուեցաւ հիմնադրամի տնօրէն Ֆրէտիկ Վարդանեանի կողմէ:

Տիկին Ջեյն Հայկ իր ելոյթին մէջ շեշտեց կարեւորութիւնը նորահաս երիտասարդութեան ընդգր-

կումը պետական կառուցներէն ներս, որպէսզի առաւել եւս օգտակար հանդիսանան համայնքի կարիքներուն:

Քալիֆորնիոյ Երեսփոխանական ժողովի անդամ Ատրին Նազարեան, խօսք առնելով շեշտեց արցախեան հիմնահարցի խաղաղ կարգաւորումն ու ցեղասպանութենէն ետք հայ ժողովուրդի արդար դատի հետեւողական հետապնդումը: Ան կարեւորեց նաեւ հայութեան գործօն մասնակցութիւնը քաղաքացիական պարտաւորութիւններուն եւ գործնական աջակցութիւններուն, որոնցմէ մին է օրուան այս գեղեցիկ նախաձեռնութիւնը եւ յարեց. «Մենք պէտք է կերտենք մեր ապագան, նուիրաբերենք ու բարձր պահենք մեր մշակույթի ջահը»:

Նոյն օրը Ա. Նազարեանի ծննդեան տարեդարն ալ ըլլալով տեղի ունեցաւ կարկանդակի հատման արարողութիւնը:

Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ «Թիւֆէնքեան Հիմնադրամ»-ի պատասխանատուներէն Ռաֆֆի Կիւտէքեան: Ան կոչ ուղղեց ծաղկեցնել ազատագրուած տարածքները եւ ուժեղ ըլլալ: Ապա Քարվաճառի վերակառուցման ծրագրին համար նուիրեց հինգ հազար տոլար:

Սրտի ջերմ խօսքերով եւ խրախուսական ելոյթով հանդէս եակն «Արարատ Հիմնադրամ»-ի կազմակերպիչ Կոմիտէի անդամ Սիլվա-Նաթալի Մանուկեան եւ շեշտեց ներդրումի կարեւորութիւնը յաջողութեան հասնելու համար:

«Իմ ալ ծնողներս հալէպցի են», - եղաւ իմ մասնակցութիւնը այս զրոյցին. - Բայց ես Պէյրուսթ ծնած եմ»: Այս բոլորէն անդին կար մէջս հարցում-հետաքրքրութիւն մը, որ ուզեցի ուղղել երիտասարդ թաշճեանին: Բաւական ծանօթութիւն ունիմ ֆրանսահայ իրականութեան հետ եւ գիտեմ նաեւ, որ մայրենիին գործածութիւնը գաղութին մէջ տեղափոխ մէջ է, մանաւանդ՝ երիտասարդ սերունդին պարագային: Իսկ իմ առջեւ կեցած էր Ֆրանսա ծնած երիտասարդ հայուհի մը, որ մեր խօսակցութեան ընթացքին ոչ մէկ օտար բառ գործածեց...: «Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Ֆրանսա ծնած ես եւ լաւ հայերէն կը խօսիս», եղաւ իմ հետաքրքիր ու դիպուկ հարցումը:

Երիտասարդ թաշճեանի երեսին վրայ գծուեցաւ ժպիտ մը: Նոյն այդ ֆրանսական ընկերութեան պաշտօնեայի հանգամանքի «պարտադրուած» ժպիտէն շատ աւելի անդին էր... Սկսած էի աւելիով տեսնել թաշճեանին հայկական ինքնավստահութիւնը եւ հպարտութիւնը իր դէմքին վրայ: Եւ իմ հարցումին ան դրաւ իր պատասխանը, որ դարձաւ ինծի համար մարտահրաշխան. «Եթէ կ'ուզես, կ'ըլլայ», ըսաւ ան:

Պատասխանը շատ պարզ էր եւ ունէր իր մէջ բովանդակութիւն մը, որ կ'ենթադրէր անձնական պատասխանատուութիւն եւ ինքնագիտակցութիւն: Հրաժեշտ առի թաշճեանէն եւ շնորհակալութիւն յայտնեցի այս հաճելի հանդիպումին համար, բայց մէջս կար մէկ շատ կարեւոր հարցում. «Ո՞վ է, որ պիտի ուզէ...»: «Մայրենի»-ին օրուան առիթով կային ուղերձներ եւ արտայայտութիւններ: Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեանը ըսաւ. «Հայոց լեզուն՝ հայ ինքնութեան ու ազգային միաբանութեան առաջնային գրաւականն ու հայապահպանութեան հիմնասիւնը, ուժացման վտանգի դէմ գործող վահանը»: Եւ նոյնքան հետաքրքրական էր նաեւ Սեւան Տէյրիմենճեանին արտայայտութիւնը. «Լեզուն կենդանի է դիմադրութեամբ»:

Բայց կայ տակաւին իմ հարցումը: Ո՞վ է, որ պիտի ուզէ «ուժացման վտանգի» դէմ կենալ, եւ ո՞վքեր են անոնք, որոնք պիտի ու պէտք է «դիմադրեն»՝ լեզուն կենդանի պահելու գրաւականին ի խնդիր... Փարիզ ծնած ու հոն ապրող

Փարիզ ծնած ու հոն ապրող

ՅԱԾԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՍԵԱՆ

ՅԱԾԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՍԵԱՆ

2018 թուականը կը նշէ տիւրը 30ամեակը այն Հայ Նահատակներուն, որոնք զոհ գացին Ատրպէյճանի Սոււկայիթ քաղաքին եւ մերձակայ շրջաններուն մէջ՝ Թուրք-Ատրպէյճանցի ամբոխներուն կողմէ Հայ բնակչութեան հանդէպ ծրագրուած եւ կազմակերպուած բարբարոս ոճրագործութեան (1988, Փետրոսար 27-29ին): Ոճրագործական այդ արարքը թէեւ գործադրեցին ատրպէյճանցի ամբոխներ, սակայն այդ քայլը կը կրէր քաղաքական իշխանութիւններուն հովանաւորութիւնը եւ ծրագրուած ուղեգիծը: Զոհուեցան հարիւրաւոր անմեղ Հայեր, մեծ մասով կիներ, մանուկներ, տարեցներ եւ անոնց բոլորքը յափշտակութեան: Հարագատ շարունակութիւն մը 1915ի Հայկական Յեղասպանութեան...: Կատարուած ոճրագործութիւնը, անշուշտ, անպատիժ մնացած Թուրքերու քաղաքական Ոճրագործութեան հարագատ դրսեւորումն էր: Ատրպէյճանի իշխանութիւնները այդ ոճրագործութեամբ կը սպառնային իր մարդկային արդար իրաւունքներու պաշտպանութեան համար ոտքի ելած Արցախի Հայութեան: Սոււկայիթի վայրագութիւնները անգամ մը եւս հաստատեցին Թուրք-Ատրպէյճանական իշխանութիւններուն ցեղասպան քաղաքականութիւնը:

Անկասկած, անոնց կատարածը բնորոշ է միայն անքաղաքակիրթ ժողովուրդներու: Սոււկայիթի այդ ոճրագործութեան օրերէն ասդին, անցած են 30 ձիգ տարիներ եւ ազգային մեր վէրքերը չեն սպիւսացած եւ տեղի ունեցած ոճրագործութիւնը մինչեւ այսօր չէ ստացած իր քաղաքական եւ իրաւական համարժէք գնահատականը: Սոււկայիթը միջագ-

գային գետնի վրայ կը մնայ դատարարութեան, որովհետեւ կատարուածը «ցեղասպանութիւն էր» եւ միջագային յանցագործութիւն: Մենք պէտք է խօսինք մեր պատմութեան մասին, որպէսզի նաեւ կանխենք ապագայ նման ոճիրներու իրականացումը: Մեր ժողովուրդին ազատութիւնը, հայրենի հողերուն վրայ ապրելու եւ ինքնութիւնը պահպանելու իրաւունքը կարելի չէ խլել սպառնալիքներով, զէնքի ու զինամթերքի բռնութեամբ եւ սպառազինութեամբ: Սոււկայիթի ջարդերուն քաղաքական կազմակերպիչները այսօր ալ կը շարունակեն սպառնալ Հայութեան եւ Հայաստանին: Այսօր, Ատրպէյճանի մէջ, Հայաստեացութիւնը աւելի ուժգին է քան 30 տարիներ առաջ, որովհետեւ Ատրպէյճանի ամբողջ սերունդը մեծցած է այն համոզումով թէ Հայերը վայրագ թշնամիներ են: Սոււկայիթի ոճիրը թէ՛ Հայ ժողովուրդին եւ թէ՛ մարդկութեան նորագոյն պատմութեան ամէնէն ողբերգական էջերէն մէկն է...:

Ճիշտ է թէ Սոււկայիթի մէջ Հայ բնակչութեան դէմ ցուցաբերուած վայրագ դաժանութիւնը իր պատասխանը ստացաւ Արցախեան պատերազմով, սակայն, հարցերը չեն հասած իրենց քաղաքական եւ մարդկային աւարտին: Այսօր, Սոււկայիթի Հայ բնակիչներու նահատակութեան 30ամեակին առիթով, մեր աղօթքներուն հետ, կը հրաւիրենք մեր ժողովուրդը, որ յարմարագոյն ձեւերով ու միջոցներով, նաեւ միջագային հանրութեան ուշադրութիւնը գրաւելով՝ պատշաճ ու գիտակից յարգանքի տուրք յայտնէ Սոււկայիթի հակամարդկային քաղաքական ոճրագործութեան զոհ դար-

Յար.ը էջ 18

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թիւր

«ԶՈՒՎՐԹՆՈՑ» Մշակութային Յանձնախումբը

Հովանաւորութեամբ՝

Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրպերեանի
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թիւրի

Սիրով կը հրաւիրէ ձեզ ներկայ գտնուելու մշակութային ձեռնարկի նուիրուած

Հայ Մեծագոյն Կին Մտաւորական, Գրագետ եւ Հասարակական Գործիչ
ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ
Ծննդեան 140 տմեակին

կը նշուի

Դոկտ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ
Անձր, ժամանակը, գործունէութիւնը, փեղը հայ եւ օտար հասարակութեան մէջ, վկայութիւններ եւ ընթերցումներ

Տեղի կ'ունենայ, Երեքշաբթի, Մարտ 27, 2018
Երեկոյեան ժամը 7:30ին

Առաջնորդարանի «ԱՐՄԵՆ ՆԱՄԱԿ» Մրահին մէջ
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Պարագիծներ
Մուտքը ազատ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԵՄԸ ԵՒ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԷՔՃԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՏԵՂԱՎԱԿԱԿԱՆ ԹՆՃՈՒԿԸ

ԹՆՃԱԿԱԿ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ՏԵՂԱՎԱԿ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒՔԵԱՆ

Գերմանիոյ հայոց թեմը հաստատուեցաւ Երջան. Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ որուն անդրանիկ թեմակալ Առաջնորդը ընտրուեցաւ Կ.Պոլսեցի Գարեգին Ծ. Վարդապետ Պէքճեանը, որուն Հայրապետը 1992 թուին շնորհեց եպիսկոպոսական ձեռնադրութիւն: Իսկոյն Գարեգին Եպիսկոպոս արքեպիսկոպոսութեան բարձրացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն եւ 28 տարիներու արդիւնաւոր պաշտօնավարութենէ ետք, 2017 Մարտին Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Տեղապահ ընտրուեցաւ: Սակայն ինչպէս ծանօթ են պարագաները, թուրք պետութեան աննպաստ միջամտութեան հետեւանքով Սրբազանին հանգամանքը չընդունուեցաւ եւ ինք ալ հեռացաւ Կ. Պոլսէն:

Վերջերս վերահասու եղանք նաեւ Գերմանիոյ հայոց թեմի Առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Պէքճեանի թեմակալի պաշտօնի իր անակնկալ հրաժարումին, կարենալ իր նոր եւ պատասխանատու Տեղապահի պաշտօնին յատկացնելու համար իր լրիւ ուշքն ու ժամանակը: Անակնկալ ըսի քանի որ իր նոր պաշտօնը դեռ ակնկալուած արդիւնքը չէր տուած: Պիտի հրաժարէր անշուշտ երբ ամէն ինչ լրանար եւ ինք կա՛մ Պատրիարք ընտրուէր եւ կա՛մ կը վերադառնար իր թեմը թեմակալի իր նոյն պաշտօնին: Սկիզբէն նախատեսուածը դժբախտաբար իրագործուեցաւ երբ պետութիւնը երբեք չվաւերացուց Տեղապահի իր հանգամանքը, վերստին իր նախկին Պատրիարքական Փոխանորդի հին պաշտօնին կոչելով Արամ Արքեպիսկոպոս Աթէշեանը: Տեղապահը ստիպուեցաւ վերադառնալ Գերմանիա ուր արդէն առաջնորդական տեղապահ մը նշանակուած էր իր պաշտօնական հրաժարումէն ետք: Երեւակայեցէք եթէ Արամ Սրբազանն ալ Տեղապահի ընտրութենէն ետք հրաժարէր, յաչս պետութեան Հայոց Պատրիարքութիւնը մնար իրապէս անգլուխ:

Եղածը ըստ երեւոյթին Հայ Եկեղեցւոյ վարկին համար շատ կոպիտ եւ աննպաստ միջամտութիւն մը ըլլալով հանդերձ թուրք պետութեան կողմէ, կը յայտնէր նաեւ Հայոց Պատրիարքութեան անունով եւ Պատրիարքի ընտրութեան համար գործի անցած մարդոց ոչ շրջահայեաց եւ անիրատես դիրքաւորումը, ըստ որում չգիտցան ճիշդ ժամանակին չարաբերիլ իշխանութեանց հետ՝ յարգելով պետութեան իրաւական երաշխաւորութիւնը: Այդ մասին տարի մը առաջ գրած էի յատուկ յօդուած մը, «Ո՛չ լաւատեսութիւն, ո՛չ յոռետեսութիւն, այլ միայն իրատեսութիւն» խորագիրով, որ լոյս տեսաւ այդ օրերուն, ուր կը ճշդէի թէ որքան ատեն որ պետութիւնը ճանաչում չէր շնորհած Գարեգին Սրբազանի Տեղապահի ընտրութեան, կարելի չէր դիրք բռնել եւ պատրիարքական ընտրութեան նախապատրաստութիւններ տեսնել առանց պետական նեցուկի:

Գրած էի մանաւանդ որ ճիշդ պիտի ըլլար տրուած կացութեան մէջ ութ տարիներէ ի վեր պետու-

թեան աչքին Արամ Արքեպոս Աթէշեանի Պատրիարքական Փոխանորդի հաստատեալ պաշտօնը օգտագործել, առանց ստիպելու որ իր հրաժարականը տար փոխան Տեղապահի ընտրութեան, եւ ի՛ր Արամ Սրբազանի անունով եւ համախորհուրդ Տեղապահին հետ, ուղղակի ինք դիմում կատարէր իմացնելով պետութեան թէ պատրաստ են պատրիարքական ընտրութեանց նախապատրաստութեան գործընթացին, Տեղապահին անունն ու հանգամանքը առժամաբար վերապահելով: Եթէ Արամ Արքեպիսկոպոս Աթէշեան միակ անձն էր պետութեան համար չարաբերելու

Պատրիարքարանին հետ, ինչպէս շատ որոշ էր, այն ատեն շատ հաւանաբար երկրին ներքին գործոց նախարարութիւնը ժխտական դիրք չէր բռնէր, յարգելով Արամ Սրբազանի դիրքն ու հանգամանքը: Դժբախտաբար սակայն տարբեր արդիւնք ստացուեցաւ եւ Տեղապահ Գարեգին Արքեպիսկոպոս թողուց իսթանպուլը եւ հեռացաւ: ձկուն քաղաքականութիւն հարկ էր վարել քան թէ Տեղապահի եւ Փոխանորդի հակընդդէմ դիրքաւորում որդեգրել պայմանաւ որ երկուքին միջեւ անկեղծ եւ շինիչ հասկացողութիւն տիրէր:

Առ այժմ դժբախտաբար



պատրիարքի ընտրութեան հարցը որ հասունցած կը թուէր անդամալուծուեցաւ եւ անորոշ ժամանակով յետաձգուեցաւ, վերադառնալով տա-

Շար.ը էջ 18

HERE IN CALIFORNIA
We Value Quality Public Education

"Education is the road to equality and citizenship"
- Martin Luther King Jr.

CTA CALIFORNIA TEACHERS ASSOCIATION

Because We Believe Quality Public Schools Make A Better California For All Of Us

Learn more at GTA.org

ՄԱՅՔ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԽՈՐԱԳԻՐՆԵՐԵՆ ԱՆԴԻՆ... ԳԵՂԱՆԿԱՐԻՉԸ՝ ԻՐ ԳՈՅՆԵՐՈՎ ԵՒ ԻՐ ՈՒՐՈՅՆ ԱՁԽԱՐԿՈՎ



ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ
Ֆրանսացիները կ'ըսեն. «Եթէ Փարիզը տեսաք և Գասիսը չտեսաք, բան մըն ալ չտեսաք» (Ֆրանսալէն):

Կրնանք անվարան «Գասիսի գեղանկարիչը» կոչել Մայք Յակոբեանը, զինք հասկնալ փորձելով՝ իր նկարներուն խորագիրները ի մի հաւաքելով և անոնց գոյները կարդալով միտիլ դէպի յաւերժութիւն:

Մայք Յակոբեան՝ մերօրեայ ինքնուրոյն նկարիչը, բնութեան բեմադրիչը և գոյներու ածպարարը:

Այսպէս՝ Գասիս, մակոյկներ, գրոց, Մարսէյի հին քաղաքը, գնդիկի խաղը (Petanque boules):

Տակաւին մեր հետաքրքրութիւնը չյազեցուցած, յանկարծ ան հակառակ ուղով մը կը կատարէ դէպի Լիբանան, անմիջապէս վերադառնալով հոն՝ ուր կը հանդիպի մէկէ աւելի խաղընկերներու:

Մայք կը շարունակէ գոյներու աշխարհի մէջ իր ուսումները, աշխարհային ուսումները և բնութեան գիրկը կրկնակի հանգիստի պահեր ապրելով:

Լիբանան՝ Մամըլիթէյն (ծովափ), ձուկի, խաղողի գինովութիւնը, կապոյտ նաւակը, Լա Ռոզ թաղամասը՝ Մարսէյի մէջ, էքսպան-Փրովանս, դարձեալ Գասիս, Մանարա՝ Լիբանան, Սան Կապրիէլ գետը՝ Լոս Անճելըս, Փասատիմալի Գոլորատայի պատմական կամուրջը, Լիբանան՝ Նահր-էլ-Գալա (Շունին գետը), Գասիս, Մարսէյ, Լիբանանցիի դիտող աչքերը, հայրը, մայրը, Մարսէյի հին նաւամատոցը, եղբայրը՝ Յովսէփը (ահա Յովսէփ, անմահացար...) մէկէ աւելի Vieux Port-ի պատկերներ, Պէյրութ, Գասիս, Մարսէյ... (նշմարելի է, միայն խորագիրները այցելելով՝ Պէյրութ, Գասիս, Մարսէյ եռանկուն մը ստեղծելով կը գոյանայ Մայք Յակոբեանի աշխարհը):

Վերադարձ՝ Գասիս, վերադարձ՝ Մարսէյ, վերադարձ՝ Լիբանան...

Յանկարծ՝ Մայք Նովա և իր քամանչան: Ծաղիկներ, ծաղիկներ... Մակոյկներ, ձկնորսներ, փողոցներ, տաճարներ (Նոթրը տամ, Գանըպիէր), պտուղներ, միրգեր, բանակարներ (նատիւրմորտեր):

Յանկարծ՝ ցեղասպանութիւն, ոճրագործ Օսմանցի, հայկական ողբերգութիւն, մտերիմ պահեր,

յաւիտենական կիթառը, Մայք Յակոբեանի տպաւորիչ նկարները, արեւոտ Քալիֆորնիան, տունին ճամբան, խամաճիկներու խմբակը, լիբանանեան նուագախումբը, դարձեալ ոճրագործ Օսմանը, Չուլթակահար խամաճիկը, գաւառական երթուղարձը, ինքնանկար (Մայքը՝ իր վրձինով) և ծովեզերեայ անմահ պահերը, փորձութիւն՝ մեղք գործելու, անկարելի երազը, մտերիմ ընթերցում, փողահար խամաճիկը, վարդագոյն սենեակը, տիկին Ռէյնըլդ, հին ճամբան, տիկին թորրես, ամառը՝ Մարսէյի մէջ, բնութեան երգը, օձապտոյտ արահետը, կամուրջ դէպի արեւ, պարը, վարդագոյն կեանքը, բախտի անիւր, Մարսէյի պատմական թատրոնը, Քալիֆորնիա, ծովափ, տունին արահետները, լիբանանեան անգութ պատերազմը, Լիբանանի սիրոյն, յաւերժական Լիբանան, գարունը, ճակատագրի պարզ հարուած մը, երաժիշտը, մանուկի մը մահը, անուշ մեղեդին, վաղը ամէն ինչ պիտի լաւանայ, Լիբանանի ազգային քայլերը, արմաւենիներու երկայնքին, կեանքի համաուզը, հայկական անկախութիւն, 1988ի Հայաստանի երկրաշարժը, պետեվի կինը՝ սուրճի գաւաթ կարդալով, գորգի վաճառականները, ժէ, ինչ գեղեցիկ օր, անտունիները, լիբանանեան շուկան, լիբանանեան գիւղեր, մայրամուտին՝ պարտէզին մէջ, Ծնունդի ձրագալոցը, իսլամական թաղամաս, արեւելեան պազար, յաւերժական սէր, դրախտին մէջ, հրակէր՝ պտոյտի, արեւելեան բաղնիք, արեւելեան ճանապարհ, հայկական պար, հինաւուրց թաղամաս, գիշերային խաւար, սիրահարներ, բարեկամութիւն, բաժանում, գրոց, քարափի վրայ շրջագայութիւն, իդձը, իդձերը, միասին՝ կը գոյատեւենք, թախիծ, պտոյտը՝ բնութեան մէջ, ճեմելու հրակէր՝ Մարսէյի ծովափին վրայ, կախարդական լոյսը, արեւամուտը, կինը և իր գիրքը, Մարսէյի մէջ յետմիջօրէ, գոյներուն հետ խաղալով, իր երգերուն հետ ապշելով, յաւերժութիւն երազելով, գոյներու աշխարհ ստեղծելով, Մայք Յակոբեանի հետ պտոյտի ելլելով, երգելով, ճեմելով, վարդ քաղելով, գոյն բերելով, վազվաւազելով ու հիացումէն մահանալով... դարձեալ վերապրելով:

Վերապրելու համար յաւիտեն

ՄԱՇՏՈՑ ԳՈՒԼԵՒԻ ՄԻՋԻՆՔԸ



Գեղեցիկ աւանդույթ դարձած է Մեծ Պահքի Միջինքի ճաշկերոյթները, որոնք կը կատարուին տարբեր միութիւններու, դպրոցներու, գոյններու տիկնանց վարչութեանց կողմէ:

Արդարեւ, Շաբաթ Մարտ 10, 2018-ին Ֆինիշիա ճաշարանին մէջ տեղի ունեցաւ Մաշտոց Գոյնի Միջինքի գեղեցիկ ճեմարկը, կազմակերպութեամբ Գոյնի Տիկնանց ժրջան վարչութեան:

Վերը ըսինք, որ Միջինքը կրօնական արարողութիւն չէ, այլ ժողովրդական աւանդույթ, որ ընդհանրապէս կանայք կ'ըլլան իրականացնողը:

Սիրուն է տեսնել, որ մեր հաստատութեան քաջալեր հանդիսացող կանայք քով քովի կու գան, թէ՛ զիրար կը տեսնեն եւ թէ՛ կ'ըմբռնեն օրուայ ճեմարկը:

Օրուայ ճաշկերոյթին բացումը կատարեց Տիկնանց վարչութեան ատենապետուհի Տիկ. Արփի Արփաճեան: Ան իր գեղեցիկ խօսքին մէջ վեր առաւ Հայ մօր եւ կնոջ մեծ դերը, բացատրեց եւ յիշեցուց, որ հայ կանայք մեր տուններու սիւնն են, նաեւ ըսաւ, որ առանց անոնց բազում գոհողութիւններուն մեր ազգի գաւազները կ'ալլասերին, Հայ մայրը միշտ արթուն, իր տան ճրագն է:

Տիկ. Արփաճեան իր շուրջը ունենալով Տիկնանց վարչութեան անդամները՝ իրմա Աքեյեան, Արաքսի Քարաքաչեան, Սեղա Իքնատոսեան, Յասմիկ Գլոբեան, Էլմիրա Անանիքեան եւ Սոնա Արուշեան, ջանացած է ուրախ եւ հաղորդակից, բարի խաղերով մթնոլորտը

միշտ գուարթախոհ եւ հետաքրքիր պահել:

Ճաշկերոյթին կը մասնակցէին աւելի քան 160 հոգի: Ձեռնարկը իր լաւ երգերով խանդավարեց երգիչ Խաչիկ Զէնեան:

Այնուհետեւ Տիկ. Արփի բեմ հրաւիրեց Գոյնի Հայկական նութերու պատասխանատու-դասախօս, գրականագէտ, հեղինակ Պրն. Յովսէփ Նալպանտեանը. ան հակիրճ, բայց բովանդակալից կերպով ներկայացուց Միջինքի իմաստը, տուաւ նորութիւններ:

Պրն. Զէնեանի պարային երգերու վրայ մեր տիկնանքը հայկական պարերով աւելի եւս մթնոլորտը կը խանդավարէին:

Մեր գաղութին մէջ Մաշտոց Գոյնը, 25 տարիներ անդադար, ջամբած է հայցի դաստիարակութիւն: Մանկավարժական եւ այլ մասնագիտութիւններով մեր հայ երիտասարդներուն տուած է անհրաժեշտ գիտելիքները կեանքի մէջ պայքարելու, ազգի եւ հաւատքի հիմքերով կեանքը աւելի գեղեցիկ դարձնելու իրենց առաքելութեան մէջ:

Զերմօրէն կը շնորհաւորենք Գուկտ. Կարպիս Տէր-Եղիայեանը, Մաշտոց Գոյնի Հիմնադիր նախագահը, որ երկար տարիներ է վեր, ի գին բազում գոհողութիւններու վար կը պահէ Գոյնի ջանք, մեր համայնքին մէջ:

Վարձքը կատար Տիկնանց վարչութեան ջանասէր հայուհիներուն, որոնք միշտ կ'աշխատին Գոյնի տարբեր ճեմարկներու յաջողութեան: Ապրիլ բոլորդ՝ ՆԵՐԿԱՅ ՄԸ

նականութիւն երազել, և այդ վիճակին մէջ՝ անշարժանալով:

Եթէ ինծի հարց տրուէր, թէ ի՞նչ տեսայ Մայք Յակոբեանի ստեղծած բնութեան մէջ, պիտի ըսէի՝ տեսայ պայծառ արեւը՝ տեսայ գարունը իր վառ գոյներով: Ամէն մէկ պատասխան տրուած ինքնատիպ խորագիր մը՝ արդէն կը ստեղծէ մեծագոյն տարր մը, որ հաւատարմօրէն կը ծառայէ արուեստի էութեան:

Պէտք է սպասել ցուցահանդէսին, կարենալ աւելի մօտէն ըմբռնելու համար ինքնատիպ Մայք Յակոբեան մը որ մեզի կու գայ քիչ մը ամէն շրջանակէ:

Մայք արուեստագէտը թէ լիբանանցի է, թէ ամերիկացի, թէ ֆրանսացի և թէ ալ ափրիկացի: Ե՛լ հայ:

Կ'արժէ մօտէն ճանչնալ և ընկերանալ Մայքին հետ, վայելելու համար անոր գուտ մտերմական կայուն նկարագիրը:

Երանի անոր, որ կրցած է

թափանցել Յակոբեանի մտերմական աշխարհը և անոր հետ վայելել արուեստի անվերջանալի պահեր: Սպասելով... առաջին և մեծ ցուցահանդէսին:

Ծանօթ.- Գասիս՝ Ֆրանսայի հայահոծ Մարսէյ քաղաքի հարաւը գտնուող ծովեզերեայ գոհար քաղաք մըն է: Ամէն անգամ որ Մայքին հանդիպիմ, հարց կու տանք իրարու՝ «Գասիս գացի՞ր», կամ՝ «Ե՞րբ պիտի երթաս Գասիս»:

Մայք Յակոբեան հրապարակ հանած է պերճաշուք հրատարակութիւն մը՝ իր նկարներու հաւաքածոյով: Ամբողջութեամբ գունաւոր, ընտիր թուղթի վրայ տպուած հոյակապ հրատարակութիւն մը (185 էջ, Տպարան Երեւան): Ստանալու համար դիմել՝ «Երեւան» տպարան (818) 246-2070, «Ապրիլ» գրատուն (818) 243-4112, «Մարտարապատ» գրատուն (818) 500-0790, գրատուն Պերճ (818) 244-3830:

ՀԻՆՊ ԲԱՆ ԿԱՆԱՆՑ ԱՐՏԱՔԻՆԻՆ ՄԷՉ, ՈՐՈՆՔ ԿԸ ՎԱՆԵՆ ՏՂԱՍԱՐԴԻԿԸ

1) Փորձարական սանտրուածքներ. տղամարդը, անկասկած, պիտի գնահատէ ձեր անհատականութիւնն ու ամբողջին առանձնանալու ցանկութիւնը, բայց աստիկա ամենեւին չի նշանակեր, որ ան ձեզի ժամադրութեան պիտի հրաւիրէ:

Տղամարդոց մեծ մասը կը նախընտրէ կնոջ երկար, բնական վարսերը: Այո՛, կան նաեւ այնպիսիք, որոնք կարճ սանտրուածքներ կը սիրեն, բայց հարկաւոր է ատով աւարտել փորձերը:

2) Դիմակ-դէմք. բոլորը գիտեն, որ շարժար հարկաւոր է թերութիւնները թաքցնելու համար: Ատոր դէմ չեն տղա մարդիկ, բայց երբ անոնք իրենց առջեւ կը տեսնեն երեք շերտով շարժուած աղջիկ, աստիկա արդէն այլ բան է: Այդ կերպով կիրնը կը կորսնցնէ իր անհատականութիւնը, իսկ աստիկա կը վանէ տղամարդիկը:

3) Իրարու փակած թարթիչներ. աստիկա նոյնպէս շարժար մասին է, այս անգամ՝ թարթիչներու սե-

ւաներկի: Տղամարդոց համար հաճելի է, երբ կիրնը կ'օգտագործէ չափազանց շատ սեւաներկ: Ատիկա թարթիչներուն կու տայ անբնական եւ աժանագին տեսք:

4) Չափազանց շատ փայլք. եթէ դիմաշարժար չէք, աւելի լաւ է կոպերու համար անփայլ ստուերաներկ օգտագործել:

Այդ կերպով պիտի կարենաք գուսպ դիմաշարժարու մազահոսով: Եթէ հմուտ դիմաշարժար չէք, նման ստուերաներկերը կը հաւաքուին աչքերու անկիւնները, որ ամենեւին ալ գրաւիչ չէ:

5) Դեղին ակուաներ եւ բերանի տհաճ հոտ. այս խնդիրը կը վերաբերի ո՛չ միայն կանանց, այլեւ՝ տղամարդոց: Ամէն պարագայի, եթէ դեղին ակուաներ ունիք, պէտք է խուսափէք ծխախոտէն, սուրճէն, կարմիր գինիէն: Սկսեցէք աւելի յաճախ խոզանակել ակուաները եւ ակուայի թէլ օգտագործել: Թարմ շնչառութեան համար նախատեսուած սիրէյները նոյնպէս հրաշալի կ'օգնեն:

ԱՍՈՒՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՐԿՈՒ ՊԱՐՉ ԳԱՂՏՆԻՔ

Ձեր երջանկութիւնը շատ կարեւոր է, բայց ոչ այնքան՝ որքան կը կարծէք:

Սովորաբար, մարդոց մեծ մասը, մասնաւորապէս աղջիկները, կը կարծեն, որ յարաբերութիւնները ինքնին պէտք է երջանկացնեն իրենց: Իբրեւ արդիւնք՝ անոնք մեծ եւ նոյնիսկ անիրական ակնկալներ կ'ունենան յարաբերութիւններէն եւ այն մէկէն, որ, իրենց կարծիքով, պէտք է ընէ՝ այն ինչ ի վիճակի չէ: Ճշմարտութիւնը այն է, որ երջանկութիւնը ընտրութիւն է, իւրաքանչիւրի անձնական ընտրութիւնը, այլ ո՛չ համացանցի մէջ կարգավիճակի փոփոխութիւնը կամ անձնագիրի կնիքը:

Ընել ա՛յն՝ ինչ ձեզի համար հաճելի է, ինչ ձեր սիրտը կ'ուզէ. ահա այս է դէպի երջանկութեան, լիարժէք կեանքի եւ յարաբերութիւններու զգացում տանող ուղին: Երբ կը հետեւիք որեւէ բանի հանդէպ ձեր ցանկութեան, ձեր կոչման, կը դառնաք գրաւիչ մարդ: Ատիկա ձեզի աւելի հետաքրքրական կը դարձնէ, աւելի լիարժէք, աւելի երջանիկ:

Ի՞նչպէս ընել աստիկա: Յիշեցէք, թէ ինչ ուզած էք միշտ ընել, հասէք ձեր նպատակներուն, անկախ այն հանգամանքէն, թէ ունեւէ մէկուն հետ յարաբերութիւններու մէջ էք, թէ ոչ: Զգտեցէք աճիլ եւ

գարգանայ: Աշխատեցէք ձեր սեփական երջանկութեան համար, մէկ կողմ ձգեցէք բոլոր ակնկալիքները, որ ունեւէ մէկը որեւէ բան պիտի ընէ ձեզի համար:

Ձեր երախտագիտութիւնը իսկական կախարդանք է յարաբերութիւններուն մէջ:

Մարդիկ կրնան մոռնալ, թէ ինչ ըսած էք, կրնան մոռնալ ինչ ըրած էք, բայց երբեք չեն մոռնար, թէ ինչ զգացմունքներ յառաջացուցած էք: Դուք երբեւէ զգացած էք, թէ ինչպէս կ'ընդունին ձեզ: Պարզապէս մարդիկ ցոյց չեն տար, որ կը գնահատեն ձեզ: Մարդիկ յարաբերութիւններու մէջ յաճախ կը դժգոհին, որ իրենց զուգընկերները չեն նկատեր իրենց ձգտումները, չեն ընդունիր ընտանիքի մէջ իրենց ներդրումը: Ինչ ալ ընէք, երախտապարտ եղէք: Եթէ ուրիշները ձեզ չ'ըմբռնեն, ուշադրութիւն կ'ուզէք, անոր հասնելու լաւագոյն միջոցն է ցոյց տալ, թէ որքան կը գնահատէք ա՛յն՝ ինչ ունիք հիմա: Եթէ ծաղիկներ կը ստանաք միայն Մարտ 8-ին եւ տարեկարձին, պէտք է հեզնել, որ, վերջապէս, ստացաք զանոնք: Աւելի լաւ է շնորհակալութիւն յայտնէք եւ անկեղծօրէն ուրախանաք: Երբ ան տեսնէ, թէ որքան հաճելի է ձեզի համար աստիկա, պիտի ուզէ աւելի յաճախ ընել:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸՆԵԼ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- Ձեր կեանքը կապեցէք ամենամօտ ընկերոջ հետ: Եթէ մէկը, որուն հետ ըլլալը ձեզի համար հետաքրքրական եւ յարմարաւէտ չէ, ու ան դեռ ձեր ամուսինը (կիրնը) չէ, փոխեցէք զայն: Ի հարկէ, եթէ ան ձեր ազգականը չէ:
- Մի՛ դադարէք սորվելէն: Եթէ կեանքի մէջ կ'առաջանաք ոչինչ ճանչնալով եւ ոչինչով հետաքրքրուելով, շատ բան կը կորսնցնէք: Մշտապէս զարգացուցէք ձեր մտաւոր հորիզոնը:
- Ներեցէք այնքան, որքան կրնաք. վիրաւորանքներէն ո՛չ մէկ օգուտ կայ:
- Որեւէ բան ըրէք ո՛չ յանուն

- դերամի:
- Ժամանակը անհամեմատ աւելի արագ կը վազէ, քան կը թուի: Եւ տարիքի հետ անիկա ընդամէնը կ'արագանայ:
- Որոշ բաներ կարելի չէ սորվիլ, անոնք հնարաւոր է միայն զգալ եւ ապրիլ:
- Նիւթական հարստութիւնը շատ բան չի նշանակեր:
- Դուք ձեզ մի՛ խաբէք:
- Անցեալէն հնարաւոր է փորձ քաղել, անցեալի մէջ ապրիլը անհնար է:
- Բարեկեցութեան աստիճանը երջանկութեամբ կը չափուի, ո՛չ թէ նիւթական բարիքներու թիւով:

ԴԱՇՏԱՆԱԴԱԴԱՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՆԴԱՂԵՑՆԵԼ. ՊԵՏՔ Է ԺԱՄԱՆԱԿԻՆ ԾԱՆՉՆԱԼ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Դաշտանադադարի սկսելուն բոլոր կիրները կը վերաբերին տարբեր ձեւով: Մէկ մասը զայն հանգիստ կ'ընդունի, ուրիշներու մօտ վախ ու խուճապ կը սկսի, երրորդները կը կարծեն, որ դաշտանադադարը սկսելուն պէս կեանքը կ'աւարտի: Կիրներու այս վերջին տեսակը այսպիսի մտածումներով կրնայ ինքզինք հասցնել նեարդային քայքայման:

Իսկապէս, դաշտանադադարին բնորոշ են բաւականաչափ տհաճ նշաններ, որոնց յայտնուիլը կապուած է մարմնի անխուսափելի հորմոնային վերափոխման հետ: Բայց եթէ դուք զանոնք ժամանակին յայտնաբերէք, կրնաք դաշտանադադարը յետաձգել եւ թեթեւցնել անոր ընթացքը:

Մարմնի մէջ դաշտանադադարի փոփոխութիւնները կը տեսնեն քանի մը տարի եւ կը բաժնուին հետեւեալ փուլերուն՝ նախադաշտանադադար, դաշտանադադար, յետ-դաշտանադադար:

Դաշտանադադարի սկսիլը շատ անհատական ընթացք է եւ կախեալ է շատ գործօններէ, ինչպէս յղութիւններու եւ յղութիւններու արհեստական ընդհատումներու քանակները, վատ սովորութիւններու առկայութիւնը եւ անգամ հոգեբանական տրամադրութեամբ: Վաղ դաշտանադադարը կը սկսի մինչեւ 40 տարեկանէն, ուշը՝ 55-էն ետք:

Դաշտանադադարի առաջին նշանները.

կի յաճախացում:

Վերջոյթներու թմրածութիւն, կրծքավանդակին վրայ ճնշուածութեան զգացողութիւն: Պատճառը արեան շրջանառութեան խանգարումն է:

Տազնապի զգացողութիւն: Անոր յաճախակի զգացողութիւն, անհանգստութիւններ, գրգռուած, նեարդային վիճակ եւ տրամադրութեան կտրուկ անկումներ:

Լորձաթաղանթներու չորութիւն: Աչքերու, բերանի խոռոչի, հեշտոցի չորութիւն:

Փոփոխութիւններ կազմուածքի մէջ: Մարմինը կը սկսի կորսնցնել կանացիութիւնը:

Մարմնի ջերմաստիճանը, անոր հսկան տատանումները:

Յիշեցէք տխրահռչակ վառելիք զգացողութեան մասին:

Եթէ դուք այս նշանները նկատած էք, կը նշանակէ՝ ձեր մարմինը կ'ահագանգէ ձուարաններու եւ մօտեցող հորմոնային վերափոխման պարտականութեան դանդաղեցման մասին: Ցաւօք, այս փուլէն ետք կանացի մարմինը կը սկսի շեշտակի ծերանալ:

Այս նշաններուն ի յայտ գալուն պէս նախընտրելի է արագ դիմել կանացի բժիշկի, որ հորմոններու հնարաւոր բուժումով պիտի փորձէ ձեր մարմինը պահել անհրաժեշտ հաւասարակշռութեան մէջ:

Պէտք է վախնալ: Հորմոններու բուժումը ստուգուած ու իսկապէս օգտակար եղանակ է: Մարմինը պիտի ստանայ անհրաժեշտ քանակով էսթրոգեններ, որ պիտի բարելաւէ հորմոններու աշխատանքը եւ ընդհանուր ինքնազգացողութիւնը: Պատրաստեց՝ ՆԱԻԻՆԷ Ն.

ԵՐԵՒՅԵՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՆԸ ԱԻՆԻ ՀԻԱՍՔԱՆՉ ԿԸ ԴԱՐՉՆԵՆ, ՔԱՆ ՇՊԱՐԸ

Դիմացկունութիւն: Կիրն, որ կը հրաժարի յանձնուելէ, հիանալի եւ խելացի կին է: Կան կիրներ, որոնց պէտք է բարոյական եւ նիւթական օգնութիւն, որպէսզի իրենց երջանիկ զգան: Բայց, իրականութեան մէջ, հիասքանչ կիրն կրնայ այդ ամէնը ընել ինքնուրոյն:

Կիրք: Կեանքը կրնայ շատ ծանրաբեռնուած ըլլալ, եւ երբեմն մենք կը մոռնանք դանդաղեցնել վազը եւ պարզապէս վայելել զայն, բայց իրականութեան մէջ, հիասքանչ կիրն չի մոռնար ժամանակ յատկացնել իր հետաքրքրութիւններուն, իր կիրքին:


Հիասքանչ կիրն կը հասնի իր նպատակին: Ան կ'ընէ ա՛յն՝ ինչ իրականութեան մէջ կ'ուզէ եւ ինչ որ անոր կեանքը ուրախութեամբ կը լեցնէ:

Անշահախնդրութիւն: Ան, որ աւելի շատ կը մտածէ միւսներուն

բարեկեցութեան մասին, հիասքանչ է: Ատիկա ի վերուստ բոլոր կիրներուն չէ տրուած, թէեւ մայրական բնագործ մէկ մասն է: Սակայն անոնք ա՛յն կիրներն են, որոնք կրնան սրտակցիլ եւ միւսները տեսնել աւելի խոր կերպով:

Ուժ: Ոչ ոքի համար հաճելի է ըլլալ այնպիսի մարդու կողքին, որ միայն կը հաղորդէ բացասական լիցքեր: Կիրն, որ դրական կը վերաբերի կեանքին, ժպտող դէմքին է, երջանկութիւն կը բերէ նոյնիսկ ամենաժանոր օրերուն: Ատիկա հիանալի կին է:

Խելք: Պէտք է բոլորը բաժնել խելացիներու եւ գեղեցիկներու: Խելացի մարդիկ գեղեցիկ են: Կիրն, որ չի զարգացնէ իր միտքը, կը գրկէ զինք աճելու եւ կեանքը նոր լոյսի ներքոյ տեսնելու հնարաւորութեան: Միտքը հիանալի գիծ է, որ պէտք է անտեսել:



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Ուսուցիչ Թեմուր Ադամեանի Ցաւալի Մահուան Քառասնօրեակի Առիթով

Մեր հայկական իրականութեան պահանջարկութիւնից մղուելով դաստիարակութիւնը, ուսուցումը եւ դպրոցը առաջնահերթ տեղ են գրաւում ընտանիքներում: Ընտանիքներ ձգտում են փափագում են կրթութիւնը եւ ուսեալ զաւակներ ունենալ, որն իրականանում է ի սկսբանէ ծնողների, ուսման մշակների՝ դաստիարակների, ուսուցիչների եւ դասախօսների միջոցով: Դպրոց ասելով մեր հայեացքի դէմ պատկերում է՝ ուսում, աշակերտ եւ ուսուցիչ: Դպրոցն այն լուսոյ տաճարն է, ուր աշակերտը սովորում եւ ուսում է ստանում ուսուցիչների հոգատարութեան ներքոյ: Ուսուցչութիւնը պաշտօն է, առաքելութիւն է, սէր եւ կոչում է, նուիրում յանուն հայակերտութեան, մարդակերտութեան, վեհի ու վսեմի: Մեր սփիւռքեան կեանքում հայ ուսուցչի դերը շատ մեծ է, մեր զաւակները հայեցի կրթութեան հոգատարութիւնը նրանց է յանձնուած, մեծ պատասխանատուութիւն եւ նուիրական ծառայութիւն:



Կելի ընտանիք, այդ բազմանդամ ընտանիքներից եւ ոչ մէկը չի արտագաղթել, այլ որոշները բնակարան եւ գործ են ստեղծել հայրենիքում:

Նա որպէս կրթական գործիչ շրջապատում յարգուած եւ սիրուած մէկն էր, նա աշխարհ տեսած մարդ էր ճամբորդելով՝ Հայաստան, Գերմանիա, Միացեալ Նահանգներ եւ այլուր: Նա իր հարազատութեան եւ ճանաչողաց շրջապատում փոքր յաջողութիւններով ուրախանում եւ քաջալերանք էր դառնում ապագայ առաւել բարձր թռիչքների: Նա սրտանց ու հոգով կապուած էր առ հայրենիք, առ ազգութիւն եւ առ մեր եկեղեցի: Նա կապուած էր ընթերցանութեան, պահում էր մի տետր իր յոյգերը գրի առնելով:

Երբ վերջին անգամ թեհրան գտնուելու օրերին այցելեցի իմ շատ սիրելի քեռի Թէմուրին եւ քեռակին Սանդուխտին նրանց գտաչ ապառոջ վիճակում, գանգատներ իրենց առողջական վիճակից: Դէհ կեանքը սա է, մարդս ուշ թէ շուտ գնալու է, որեւէ կասկածանք, բոլոր ստեղծածների պարագան էլ նոյնն է լինելու, բայց երանի նրանց, որ իրենց երկրային կեանքը իմաստաւորում են յիշատակելի ծառայութիւններով, պաշտառ եւ բարի անուն թողնելով իրենց յետնորդների սրտերում, մեր քեռին դարձաւ մէկը յիշարժան անձերից:

Թէմուրի կողակից Սանդուխտը կեանքին հրաժեշտ է տուել փետրուարի սկիզբը, նրանք սիրալիր ամուսիններ էին ամենայն սիրով նուիրուած իրենց զաւակներին՝ օրինակելի ծնողներ: Մանր է եղել կնոջ մահը Թէմուրի համար, այնպէս որ ինք եւս կնոջ մահից 15 օր անց հոգին աւանդում է՝ փետրուարի 19, 2018 թ. միանալով կնոջը: Յուղարկաւորութիւն-թանգումը կառարուել է հոծ սպաւորներ ի ներկայութեամբ հայկական գերեզմանատնում: Եղել են արտայայտողներ ուսուցիչների եւ ճանաչողաց կողմից: Թող որ Աստուած նրանց հոգին լուսաւորի էն անդէպական կեանքում միասին խաղաղութեան մէջ ապրելու համար:

Ի խորոց սրտէ ցաւակցութիւններ զաւակներին, հարազատներին եւ բոլոր ճանաչողաց:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Ռ. Կորիւն

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԵՍԸ

Շարունակուած էջ 15-էն

րիներ առաջուան կացութեան: Ո՛չ մէկ յառաջդիմութիւն:

Գարեգին Արքեպիսկոպոս Պէքճեան

Մնած Կ. Պոլիս 1942-ին եւ ուսանած Սկիւտարի Ս. Խաչ դպրեվանքին 1959-1963 տարիներուն, եւ ապա՝ Իսթանպուլի համալսարանի գրականութեան բաժինը, հետեւելով դասական լեզուներու, պատմութեան եւ ընկերաբանութեան: Շրջանաւարտ ըլլալով Ս. Խաչ դպրեվանքէն, 1965 թուին կուսակրօն քահանայ ձեռնադրուած Շնորհք Պատրիարք Գալուստեանի ձեռամբ, ժառանգելով Դպրեվանքի հիմնադիր Խաչատուրեան Գարեգին Պատրիարքի անունը եւ դառնալով Դպրեվանքի առաջին ձեռնաստուը: 1966-1973 տարիներուն Գարեգին վարդապետ Պէքճեան Գերմանիոյ Պոնն եւ Պոխում համալսարաններուն մէջ ուսած է գերմաներէն լեզու եւ մանկավարժութիւն: Յաջորդող երկու տարիներուն հոգեւոր հովիւ կարգուած է Մարսիլիոյ Ս. Թարգմանչաց մայր եկեղեցոյ: 1991 թուին նշանակուած է Գերմանիոյ նորահաստատ թեմին Առաջնորդ Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, եւ տարի մը ետք ծայրագոյն վարդապետի աստիճանները ստացած է Գարեգին Պատրիարք Գազանճեանէն: 1992-ին եպիսկոպոս ձեռնադրուած է Մայր Աթոռի մէջ Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ:

Գերմանիոյ Թեմը

Ի պատիւ Գարեգին Արքեպիսկոպոս Պէքճեանի հարկ է արձանագրել որ նորահաստատ Գերմանիոյ հայոց թեմը մօտ երեք տասնամեակներէ ի վեր ծաղկեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանիին ներքեւ: Հայեր Գերմանիոյ մէջ իրենց համայնքային առաջին կազմը ստեղծեցին 1923 թուականին մայրաքաղաք Պերլինի մէջ: Համաշխարհային Բ. պատերազմէն ետք Սովետական հայ գերիներ Գերմանիա եկան եւ ժամանակաւորապէս բնակութիւն հաստատեցին եւ ապա շատեր անոնցմէ գաղթեցին Միացեալ Նահանգներ: 1960-ական թուականներուն, երբ Լիբանան քաղաքական կոիւներութիւնը դարձած էր, հայեր մեծ թիւով Գերմանիա գաղթեցին: Նոյնպէս նաեւ Պարսկաստանէն՝ երկրին մէջ ծագած յեղափոխութեան հետեւանքով, եւ Թուրքիայէն՝ ուր ազգայնամոլ քաղաքականութիւնը բռնկած էր:

Իր կարգին Հայաստանի 1988 թուի ահռելի երկրաշարժէն ետք, եւ Լեռնային Ղարաբաղի անստոյգ եւ վտանգաւոր կացութեան պատ-

ճառով, մեծ թիւով հայեր Գերմանիա ապաստանեցան, եւ 1965-էն ետք հայութեան թիւը հասցուցին երկուքէն երեք հազարի երբ եկեղեցական եւ մշակութային նախաձեռնութիւններ ակնառու դարձան գաղութէն ներս:

Թեմակազմ Կառոյցը

Գերմանիոյ հայ համայնքը մինչեւ 1980 ենթակայ մնաց Փարիզի Հայրապետական Պատուիրակութեան մնայուն հոգեւորականի մը հովուութեան տակ: Նոյն տարին Հայրապետական տնօրինութեամբ թեմին Փարիզի ենթակայութիւնը կը փոխարինէր այս անգամ կեղրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակութիւնը: Մինչ այդ, հայկական միութիւններ կը ստեղծուէին Գերմանիոյ զանազան քաղաքներուն՝ Համպուրկի, Պերլինի, Քէօլնի, Ֆրանքֆուրթի եւ Շթուտկարթի մէջ, եւ 1980-էն ետք տասնեակ մը այլ քաղաքներու մէջ, ըստ Առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոսի մէկ պաշտօնական հաղորդագրութեան: Հայ հոգեւորականներ կարգաւ որպէս ուսանող կամ այցելու հովուած են Գերմանիոյ գլխաւոր համայնքները մինչեւ անդրանիկ Առաջնորդ Գարեգին Պէքճեանի եպիսկոպոսի ընտրութիւնը: Անոնց մէջ կը յիշուի Գարեգին արքեպիսկոպոսի, այժմու Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը որ Քէօլնի մէջ ծառայած է 1975-1977:

Գերմանիոյ Թեմից Հաստատումը

1990 թուականէն սկսեալ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Ա. յարմար տեսած է Գերմանիոյ հայոց թեմը հաստատել, եւ իր տնօրինութեամբ Մարսիլիա պաշտօնավարող Գարեգին վարդապետ Պէքճեանը վերատեսուչ կարգած է թեմին, երբ նոյն տասնամեակին Գերմանիոյ հայութեան թիւը ստուարացաւ մինչեւ 35,000-ի հասնելով: 1992 թուին Վազգէն Ա. Հայոց Հայրապետ եպիսկոպոս ձեռնադրելով Գարեգին վարդապետը, պաշտօնապէս հաստատեց Գերմանիոյ հայրապետական թեմը: Համաձայն նորընտիր Առաջնորդի տեղեկագրութեան, թեմը կը կեղրոնանար Քէօլն քաղաքին մէջ, որուն կը միանային 14 համայնքներ: Կան նաեւ աւելի փոքր համայնքներ «որոնք կազմակերպուած են իբրեւ մշակութային միութիւններ որոնք Առաջնորդի յատուկ կարգադրութեամբ կիրականօրեայ պատարագներ կը մատուցանեն»: Գերմանիոյ թեմը շատ բան կը պարտի նուիրեալ իր Առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Պէքճեանին:

30-ԱՄԵԱԿ ՍՈՒՄԱԿՅԻԹԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Շարունակուած էջ 14-էն

ձած բազմահարիւր մեր անմեղ եղբայրներուն եւ քոյրերուն:

Յարգանքը եւ անոնց յիշատակին պահպանումը բոլորիս սրբազան պարտականութիւնն է, մանաւանդ երբ կը գիտակցինք թէ այսօր

ալ Թուրք-Ատրպէյճանական քաղաքական ձգտումները ո՛չ միայն պատմութիւնը գիտակցաբար կը խեղաթիւրեն, այլեւ Հայերը կը ներկայացնեն իբր «ցեղասպան» ժողովուրդ եւ կը սպառնան Հայաստանի եւ Հայաստանի բնակչութեան:

ՇՔԵՂ ԳԱՇԿԵՐՈՅԹ Ի ՆՊԱՍՏ ԲԱՐՎԱՃԱՌԻ

Շարունակուած էջ 7-էն

օգտաշատ նախաձեռնութեան: Տեղի ունեցան նաեւ սրտաբուխ այլ նուիրատուութիւններեւ աճուրդա-

յին վաճառք: Աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Կոմիտէի Համատեանապետ Արա Ահարոնեան: Ան իր ուրախութիւնը յայտնեց որ

սոյն միջոցառումը կը զուգահէյտէր նաեւ Արցախի ազատագրման շարժումի 30-ամեակին հետ: Ապա շնորհակալութիւն յայտնեց օրուան միջոցառումի բոլոր մասնակիցներուն,

յան յանձնարումը անդամներուն եւ նուիրատուներուն:

Հայրենանուէր եւ գնահատելի միջոցառում մը արդարեւ: Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

ՄԱՅԱԶԴ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆ

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ հարազատին ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆի մահը: Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 19 Մարտ 2018ին Մալաթիայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Երեւան, Հայաստան: Սգակիրներ՝ Այրի Տիկին Ժողէֆին Գուզուեան, Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարգրիտ Գուզուեան եւ զաւակները Այրի Տիկին Ժիւլիէթ Աւագեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Նազարէթ եւ Մարինա Գուզուեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Մովսէս եւ Տալիտա Խաչատուրեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Ճորճ Գուզուեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Սարգիս Գուզուեան եւ զաւակները Այրի Տիկ. Լիտիա Տէօքմէճեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Լենա Սարգիս եւ զաւակները Տէր եւ Տիկ. Յովսէփ Գուզուեան, Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Գարոլին Սամուէլեան եւ դուստրը Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Թայլին Լապայեան, Տէր եւ Տիկ. Եագուպ եւ Սիլվի Գուզուեան, Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Հեքիմեան եւ համայն Գուզուեան, Աւագեան, Գուզուեան, Խաչատուրեան, Սարգիս, Մակարեան, Տէօքմէճեան, Մելիքեան, Մարտիրոսեան, Պէքարեան, Մանուէլեան եւ Հեքիմեան ընտանիքները:

ՑԱԲԱՑԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժորժ եւ Հէնրիէթ Գուզուեանին: *****

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆի մահուան տխուր առիթով Ս.Գ.Հ.Կ.ի «Սապահ Գուլ» մասնաճիւղի Վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժորժ եւ Հէնրիէթ Գուզուեանին: *****

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆի մահուան տխուր առիթով Ս.Գ.Հ.Կ.ի «Արսէն Կիտուր» մասնաճիւղի Վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժորժ եւ Հէնրիէթ Գուզուեանին: *****

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ մարմինը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժորժ եւ Հէնրիէթ Գուզուեանին:

ՄԵԾԱՎԱՐՊԵՏ ԶԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԸ

Շարունակուած էջ 13-էն

դաւոր զաւակները՝ Արմէնն ու Արամը: Իրօք, պտուղը ծառից հեռու չի ընկնում: Իր անգուզական երգչուհի ու հաւատարիմ կողակից Մարիետայի հետ միասին Հենրիկ Անասեանը ազգին պարգեւել է (փոխաբերական իմաստով) պտղաբերած մի փառայեղ այգի: Ակամայ յիշում ես մեծն Վ. Թէքէյեանի խօսքը. «Քեզ հայ լեզու, կը սիրեմ մրգաստանի մը նման»:

Թի ՄԵԾՎԱՐՊԵՏ է»: Հարկ է իր ժամանակին արժանին տալ արժանաւորին: *****

ԶԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ (Ծննդեան 80ամեակին) Զրաշալի խմբավար ես ու գրող, Երախտաշատ երգահան ես ու Մեծ մարդ, Նուիրակամ, միշտ եռանդուն ու շէնշող, Բոպէի մէջ ամփոփելով կեանքը բարդ: Ինչքան արագ հասար դու քո ութսունին, Կեանքդ երկար ու անսպառ թող լինի, Աշխարհը դեռ շատ բան ունի, որ քեզ տայ, Նոր ու բազում մեղեդիներ հիւսաքանջ,

ՄԱՅԱԶԴ



ՀԵԼԷՆ ՓՈՇՈՂԼԵԱՆ-ՏԱՏԵԱՆ Ծնեալ 1938

Խոր վիշտով կը գուժենք մեր սիրեցեալ կնոջ, մօր եւ հարազատին ՀԵԼԷՆ ՓՈՇՈՂԼԵԱՆ-ՏԱՏԵԱՆ մահը որ պատահեցաւ Հինգշաբթի, Մարտ 15, 2018ին Գանատա: Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, Մարտ 19, 2018ին Գանատայի մէջ: Սգակիրներ՝ Տիար Մկրտիչ Փոշոյլեան, Տէր եւ Տիկ. Մայք եւ Սեդա Պապիկեան եւ զաւակները՝ Էլիզապէթ, Լիւսի եւ Պրիճիթ, Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Լօտի Պապիկեան եւ զաւակները՝ Ճօն եւ Մայքըլ, Տիար Ռոպէր Պապիկեան, Տէր եւ Տիկ. Վարդան եւ Գարին Տէփոյեան եւ զաւակները՝ Վահագ եւ Ռաֆֆի եւ համայն Փոշոյլեան, Տատեան, Պապիկեան եւ Տէփոյեան ընտանիքներ:

ՑԱԲԱՑԱԿԱՆ

ՀԵԼԷՆ ԹԱԹԵԱՆ-ՓՈՇՈՂԼԵԱՆի մահուան տխուր առիթով (մահացած Գանատա) «Մասիս» շաբաթաթերթի վարչութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեանին:

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ՀԵԼԷՆ ԹԱԹԵԱՆ-ՓՈՇՈՂԼԵԱՆի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեան \$100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

«ԵԹԵ ԿՈՒՉԵՍ, ԿՐԼԼԱՅ...»

Շարունակուած էջ 14-էն
Հաղորդակցիլ: Եւ եթէ «հայուն ինքնութիւնը եւ ազգային միաբանութիւնը» պիտի պահպանենք, այս պիտի նշանակէ, որ նաեւ պիտի պահպանենք «հայոց լեզուն»: Եւ «մայրենիին» պահպանումը մեծապէս պիտի օգնէ, որպէսզի հայը աւելի լաւ կրնայ հասկնալ «միւս» հայը: Բայց «հայոց լեզուն» պահելու համար պէտք է «դիմադրութիւն»: «Դիմադրութիւնը» նախ եւ առաջ անձնական ընտրանք է... Իմ ընտրանքը, բայց նաեւ՝ իւրաքանչիւր հայունը: «Եթէ կ'ուզես, կ'ըլլայ»: Երիտասարդ Թաշեանը «ուզած» է... Ան փարիզի օդակայանին մէջ ապացուցեց, որ «կ'ըլլայ» եղեր... որ «մայրենիին» կը պահուի, եթէ ուզես... Եւ ուզողը: Պէտք է ըլլամ ես, դուն եւ՝ բոլորս: Թաշեանին ընտրանքը, բայց նաեւ՝ իւրաքանչիւր հայունը: «Մայրենիին» պահպանումը...

Աջ ձեռքդ վրան՝ Մարիետա, Արմեն, Արամ եռեակի, Սթափ հայեացքդ ազնիւ կանջ թող լինի, Երանաւէտ ժպիտ ունես, դու լաւ գիտես, Այն ես դու միշտ՝ երգ գրես թէ SMS, Նոյն ոգին է, ոչ թէ՛ էսպէս ու էնպէս...

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain Syrian Armenian Relief Fund P. O. Box 1948 Glendale, CA 91209-1948 www.syrianarmenianrelieffund.org

ՄԱՐՉԱԿԱՆ

Մոհամեդ Սալահի Ռեկորդը «Լիվերպուլում»

«Լիվերպուլի» եգիպտացի կիսապաշտպան Մոհամեդ Սալահը, պոկերի հեղինակ դառնալով «Ուոլթֆորդի» դեմ Անգլիայի առաջնութեան 31-րդ տուրի խաղում (5:0), ընթացիկ մրցաշրջանում անպիտակ ակումբի կազմում կոլերի քանակը հասցրել է 36-ի:



Սալահն առաջին ֆուտպոլիստն է, որը «Լիվերպուլի» կազմում անցկացրած մեկնարկային մրցաշրջանում 36 կոլ է խփում բոլոր մրցաշարերում: Այդ ցուցանիշով նախորդ ռեկորդը պատկանում էր սպանացի յարձակուող Ֆերնանդո Տորեսին, որը «Լիվերպուլում» 33 գոլի հեղինակ էր դարձել մեկնարկային մրցաշրջանում, գրում է Opta Sports-ը:

Բացի այդ, «Ուոլթֆորդի» դեմ խաղում Սալահը կատարել է 4 հարուած եւ դարձել 4 կոլի հեղինակ: Նախորդ անգամ Պրեմիեր լիգայում նման դիպուկություն գրանցել չաջողուել էր «Արսենալի» ու Ռուսաստանի հաւաքականի նախկին յարձակուող Անդրէյ Արշաւինին:

«Լիվերպուլի» կազմում Պրեմիեր լիգայում նախորդ անգամ պոկեր ձեւակերպել էր ուրուգուալցի յարձակուող Լուիս Սուարեսը (2013 թուականին):

Եգիպտացի կիսապաշտպանը 28 կոլով գլխավորում է Անգլիայի առաջնութեան ումբարկուների ցուցակը՝ 4 կոլ գերազանցելով երկրորդ տեղում գտնուող Հարի Բեյնին («Տոտենհեմ»):

Անգլիայի Գաւաթ.

«Չելսի» Դուրս Եկաւ Կիսաեզրափակիչ

Ֆուտպոլի Անգլիայի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչում Լոնտոնի «Չելսին» լրացուցիչ ժամանակում 2:1 հաշուով յաղթեց «Լեսթերին» եւ դուրս եկաւ յաջորդ փուլ: Լեսթերում կայացած խաղի հիմնական ժամանակն աւարտուեց 1:1 հաշուով, իսկ լոնդոնցյան ակումբի յաղթական գոլը 105-րդ րոպէին խփեց սպանացի կիսապաշտպան Պեդրոն:



Կիսաեզրափակիչի ուղեգիր նուաճեց նաեւ «Մաուլթհիմիթոնը», որը հիւրընկալուելիս 2:0 հաշուով յաղթեց նախորդ փուլում «Մանչեսթեր Սիթիին» պաշարից դուրս թողած «Ուիգանին»:

Կիսաեզրափակիչի խաղերը կը կայանան Ապրիլի 21-ին եւ 22-ին: «Մանչեսթեր Յունայթեդը» սեփական դաշտում եզրափակիչի ուղեգիրը կը վիճարկի «Տոտենհեմի» հետ, իսկ միւս կիսաեզրափակիչում «Չելսին» կ'ընդունի «Մաուլթհիմիթոնին», յայտնում է մրցաշարի կայքը:

Մոուրիսիոն Դժգոհել է «Մանչեսթեր Եունայթեդի» խաղացողներից

«Մանչեսթեր Եունայթեդի» պորտուգալացի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուուրիսիոն մեկնաբանել է Անգլիայի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչում «Բրայթոնի» նկատմամբ տնային յաղթանակը:

«Չխաղացինք այնպէս, ինչպէս ես էի ցանկանում: Հասկանալի է, որ մենք արժանի էինք յաղթանակի, կառավարում էինք խաղը, սակայն չխաղացինք լաւագոյն կերպով:

Ինձ դարձեալ դուր չեկաւ համագործակցութիւնն առջեւի գծում: Մեղաւոր են բոլոր խաղացողները: Ոմանք վախեցնում էին խաղալ: Չեմ մանրամասնի, բայց խօսքը բնաւորութեան, վստահութեան եւ կարգի մասին է:

Դժուար պահերին ոչ բոլոր խաղացողներն են վստահ գործում եւ ցուցադրում բնաւորութիւն: Երբեմն նրանք խուսափում են յաճախ գնդակ ստանալուց», - մարզիչի խօսքը մէջբերում է BBC-ն:

Յիշեցնենք, որ «Մանչեսթեր Եունայթեդը» յաղթել էր 2:0 հաշուով եւ դուրս եկել կիսաեզրափակիչ: Կիսաեզրափակիչի ուղեգիր է նուաճել նաեւ Լոնտոնի «Տոտենհեմը»:

«Նապոլի» Սօսեցաւ «Եուվենտուսին»

Իտալական A Սերիայի 29-րդ տուրում «Նապոլին» տանը նուազագոյն հաշուով յաղթեց «Ջենոային» եւ մօտեցաւ առաջատար Թուրինի «Եուվենտուսին»: Տանտերերի յաղթական կոլը 72-րդ րոպէին անկիւնային հարուածի խաղարկման արդիւնքում խփեց սպանացի պաշտպան Ռաուլ Ալբիոլը: Նապոլիցիները չէին յաղթել նախորդ 2 խաղերում:

Երկրորդ տեղում գտնուող «Նապոլին» հաւաքեց 72 միաւորով եւ 2 միաւոր է հետ «Յուվենտուսից», որն այս տուրում կոլազուրկ ոչ ոքի էր խաղացել ՍՊԱԼ-ի հետ:

ԱԱ-2018. ՖԻՖԱ-ն Հաստատեց Չորրորդ Փոփոխութիւնը

Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) խորհուրդը հաստատել է 2018թ. աշխարհի առաջնութեան փլէյ-օֆֆի հանդիպումների լրացուցիչ ժամանակում խաղացողի չորրորդ փոփոխութիւն կատարելը, հաղորդում է ՖԻՖԱ-ի պաշտօնական կայքը:



Յիշեցնենք, որ ՖԻՖԱ-ի խորհուրդը հաստատել էր նաեւ 2018թ. աշխարհի առաջնութիւնում կրկնապատկերի մրցավարական համակարգի կիրառումը: Համակարգն արդէն օգտագործուել է 2017թ. Կոնֆեդերացիաների գաւաթի խաղարկութիւնում եւ 2017թ. աշխարհի ակումբային առաջնութիւնում:

Համակարգը կիրառուում է Իտալիայի եւ Գերմանիայի առաջնութիւններում: Յաջորդ մրցաշրջանից այն կ'ուղենան նաեւ Ֆրանսայի եւ Իսպանիայի առաջնութիւնները:

Յունիսի 14-ից Յուլիսի 15-ը կայանալիք աշխարհի առաջնութեան հանդիպումները կ'ընդունեն Մոսկուայի, Մանկո Պետերբուրգի, Սոչիի, Կազանի, Դոնի Ռոստովի, Կալինինգրադի, Վոլգոգրադի, Սամարայի, Սարանսկի եւ Եկատերինբուրգի 12 ստադիոններ:

Հայ Բռնցքամարտիկները Շարունակում են Յաղթանակների Շարքը Պրոֆեսիոնալ Ռինգում

Հայաստանի հաւաքականի նախկին բռնցքամարտիկներ Արամ Աւագեանը, Նարեկ Աբգարեանն ու Գոռ Երիցեանը հերթական յաղթանակներն են տարել պրոֆեսիոնալ ռինգում:



Մոսկուայում կայացած մրցաշարում Նարեկ Աբգարեանը մրցավարների միաձայն որոշմամբ պարտութեան է մատնել ուզբեկ Բեկսուլիթան Ռաուզանովին՝ տանելով 8-րդ յաղթանակը 8-րդ մենամարտում (5 նոկաուտ):

Գոռ Երիցեանը 8-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով յաղթել է Վրաստանը ներկայացնող Միխեիլ Աւագեանին: Դա Երիցեանի 5-րդ անընդմէջ յաղթանակն էր:

Արամ Աւագեանը (58գ9 կգ) մրցավարների միաձայն որոշմամբ ուժեղ է գտնուել ուզբեկ Բուրգուտ Հաջիբեռեից: Աւագեանն անցկացրել է 7-րդ մենամարտը եւ տարել 7-րդ յաղթանակը (2 նոկաուտ):

Հայ բռնցքամարտիկները հանդէս են գալիս Punch Boxing Promotions-ի թիմում:

Ռոնալդուս «Ռեալին» Յաղթանակ Բերեց Կոլառատ Խաղում

Սպանական Պրիմերայի 30-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» տանը 6:3 հաշուով առաւելութեան հասաւ «Ժիրոնայի» նկատմամբ: Արքայական ակումբից 4 կոլ խփեց պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուս: Երրորդ կոլի արդիւնքում նա ձեւակերպեց կարիերայի 50-րդ հեթ-տրիկը:

Ռոնալդուս Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում կոլերի քանակը հասցրեց 22-ի եւ մէկ կոլով շրջանցեց «Բարսելոնայի» ուրուգուալցի յարձակուող Լուիս Սուարեսին: Ռմբարկուների ցուցակը գլխավորող Լիոնել Մեսին խփել է 25 կոլ:

Այս յաղթանակից հետո «Ռեալը» շրջանցեց «Վալենսիային» եւ 60 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ՝ 6 միաւոր գիշերով երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյին»: Առաջատար «Բարսելոնան» ունի 75 միաւոր:

«Բարսելոնան» Յաղթեց, Մեսիի Հերթական Կոլն Ու Ռեկորդը

Սպանիայի առաջնութեան 30-րդ տուրում «Բարսելոնան» սեփական դաշտում 2:0 հաշուով պարտութեան մատնեց Բիլբաոյի «Աթլետիկին»: Դաշտի տէրերից առաջին խաղակէստում աչքի ընկան արժենթիանացի Լիոնել Մեսին ու սպանացի յարձակուող Պակո Ալկասերը: Արժենտինացի յարձակուողը 25 կոլով շարունակում է գլխավորել ումբարկուների ցուցակը:

30-ամեայ Մեսին դարձաւ առաջին ֆուտպոլիստը, որն Սպանիայի առաջնութիւնում նուազագոյնը 25 կոլ է խփում 10 մրցաշրջան անընդմէջ: Այդ ռեկորդը կարող է կրկնել նաեւ Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուսը, եթէ Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում դառնայ եւս 7 գոլի հեղինակ:

«Բարսելոնան» մրցաշարային աղիւսակը գլխավորում է 72 միաւորով եւ 8 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյի» նկատմամբ: